

1014

Ա. Կ. ՊԵՏԻԿԵԱՆ

ԱՅԿԱՐԶԱԲԱՐ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԵՒ

ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ ՏԱՐՐԵՐ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՆՈՐ ԴՐՈՒԹԵԱՄԲ

ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՆԵՐՈՒ ՉԱՄԱՐ

ՇՐՋԱՆ ԱՌԱՋԻՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Սրբագրուած եւ նոխացուած



Կ. ՊՈԼԻՍ

ԿՐԱՏՈՒՆ Պ. ՊԱԼԵՆՑ

1898

Ա. Կ. ՊԵՏԻԿԵԱՆ

ԱՅԿԱՐԷԱԲԱՐ

Գործնական Քերականութիւն

եւ

Ճարագրութեան Տարրեր

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՆՈՐ ԴՐՈՒԹԵԱՄԲ

ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ՇՐՋԱՆ ԱՌԱՋԻՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Սրբագրուած եւ նոխացուած



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԱՏԹԷՍԵԱՆ

—
1898



ՏՊԱՐԱՆ, ՎԻՄԱԳՐԱՏՈՒՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ

Յ. ՄԱՏԹԷՈՍՅԱՆ

Թիւ 27, Ֆիննաներլար Եօզուշու, Կ. Պոլիս:

معارف عمومیہ نظارت جابلہ سنک رخصتنامہ سیدہ طبع اول نمشد

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ



Իբրեւ յառաջարան կ'ուզէի գրել միայն սա բառերը — Փորձեցիք այս Բերականորթիւնն ալ : Սակայն ումանք որ ձեռագիրը տեսան, ըսին թէ անհրաժեշտ է յառաջարան մը գրել, վասն զի այս գործը այնքան նոր է իր տեսակին մէջ, որ կրնայ յեղաշրջում մը նկատուիլ քերականական ընդհանուր դրութեան :

Ուստի կը գրեմ սովորական յառաջարանը, բայց միշտ նոյն համոզումը պահելով թէ ո եւ է ուսուցիչ որ յանձն կ'առնէ աչքէ անցընել զայն, սխտի ըմբռնէ գործին ուղղութիւնը, առանց ո եւ է բացատրութեան :

Երբ հրապարակին վրայ աւելի կամ նուազ խնամով պատրաստուած այնքան քերականութիւններ կը գրտնուին, մեր Բերականութիւնը, որուն Առաջին Շրջանը միայն կը տեսնուի այս հատորին մէջ, եւ որ վերջէն կու գայ կը մտնէ առաջիններուն կարգին մէջ, թէ՛ ըսենք եւ թէ՛ չըսենք, ինքնին կ'ենթադրէ առաւելութիւն աւնոնց ամենուն վրայ :

Պիտի չի համարձակէի այսքան յաւակնութիւն ցոյց տալ իմ ներկայ աշխատութեանս մասին, եթէ ես ինքս գտած ըլլայի այն մէթոտը եւ ուղղութիւնը, որուն հետեւած եմ դասագրքիս բոլոր ընթացքին մէջ : Անոր սկզբնաւորութիւնը արդէն տարիներ առաջ թէրդեան ըրած է : Ես առաջնորդուած եմ երկու յոյժ հոյակապ

գործերէ (1), որոնք Անգլիախօս ուսանողներու օրուան դասագրքերն են, թէեւ անձնական փորձառութիւն եւ աշխատանք մեծ բաժին մը ունեցած են անոր մէջ :

Այս կրկին դասագրքերը, որ Անգլիական եւ Ամերիկեան բարձր ուսումնաժողովներէն յանձնարարուած են պետական եւ նախակրթական ամէն կարգի դպրոցներուն, պատրաստուած են մանկավարժական ամէն պահանջուած պայմաններուն համաձայն : Ասոնք սովորական քերականութիւններուն պէս լեցուն չեն լեզուի չոր ու ցամաք կանոններով, այլ հիմնուած են բնութեան մէթոտին վրայ, որ, ըստ Պ. Մարսէլի, «Մէթոտներուն ամենէն բարձր տիպարն է :» Անոնք կը տրամադրեն գործնականէն տեսականին երթալ, մասնաւորէն՝ հանրականին, լեզուէն՝ կանոններուն, ինչպէս Սբէնսըր կը պահանջէ :

Սոյն տիպար դասագրքերէն ներշնչուած՝ պատրաստած եմ Ա. Շխարհարար Գործնական Բերականուրթիւնս, որուն նպատակն է լեզուին նիւթը ներկայացնել դեռահաս տղայոց առջեւ՝ մարմնացեալ կամ առարկայացեալ ձեւի տակ, փորձական վարժութեամբ, տարրերով՝ քան կանոններով : Հոս աշակերտը դէմ յանդիման բերուած է նոյն իսկ կենդանի լեզուին, զոր իր խաղալիքներուն պէս կը գործածէ ամէն կողմ դարձնելով, ամէն ձեւի փոխելով : Բերականութիւնը ձեռք առած օրէն կը սկսի բառերը ճանչնալ եւ գործածել, նախադասութիւններ շինել :

Այս դասագրքին ներքին արժանիքը կազմող մէկ նշանակելի տարրն ալ սա է որ ուսանողը ոչ միայն բա-

(1) Essentials of English Grammar, by Prof. Whitney. Swinton's Language Primer.

սերուն կը ծանօթանայ շատ բնական եւ հաճելի ճամբով, այլ եւ կ'ըմբռնէ անոնց իրական արժէքը եւ բնութիւնը : Կը հասկնայ բառերուն սլաշտօնները կամ դերերը, զորս կը կատարեն անոնք խօսքի կազմութեան մէջ : Մէկ խօսքով, կը սորվի քերականութեան փիլիսոփայութիւնը, կամ քերականութիւնը իբր փիլիսոփայութիւն, որով միտքը կը մշակուի դիտողութեամբ : Այս ընթացքով, ուսանողները շատ կանուխ կը սկսին շարադրութեան եւ գրաւոր ու բերանացի բառազննութեան կամ վերլուծութեան վարժութիւններու, ոչ թէ անգիտակցաբար, այլ դատողութեամբ, որով քիչ ժամանակի մէջ կը տիրանան լեզուին, եւ այս ամէնը անզգալի կերպով, հետաքրքրական եւ հաճելի եղանակով մը :

Ներկայ գործիս ամբողջութիւնը երեք շրջաններու բաժնուած է, ինչ որ դասագրքին մէկ նորութիւնը կը կազմէ, եւ որուն ընձեռած օգուտները հետզհետէ փորձով պիտի տեսնուին :

Առաջին Շրջանին մէջ ուսանողը պիտի ծանօթանայ սոսկ քառերուն եւ անոնց կասարած պաշտօններուն, նաեւ նախադասութեան բնութեանը, առանց սորվելու մանրամասնութիւնները : Զոր օրինակ, պիտի ծանօթանայ թէ ի՛նչ է անունը եւ ի՛նչպէս խօսքի մը մասը կը կազմէ : Եթէ աչակերտ մը հարկադրուի թողուլ դպրոցը, մինչեւ իսկ միայն այս մասը աւարտելէն վերջը, պիտի կրնայ իրեն հետ տանիլ բուռական հիմնական եւ կարեւոր ծանօթութիւններու սլաշար մը՝ նկատմամբ նախադասութիւններու կազմութեան եւ զայն բաղկացնող մասերուն — բառերուն :

Երկրորդ Շրջանին մէջ կ'աւանդուի մասունիք բանիներուն ստորաբաժանունը կամ տեսակները՝ ճիշդ այն

կարգով, որով դասաւորուած էին Առաջին Շրջանին մէջ :
 Զոր օրինակ, թէ քանի՛ տեսակ անուն կամ բայ կայ,
 եւ այլն : Այս շրջանին մէջ աշակերտները ոչ միայն
 աստիճանաբար նոր ծանօթութիւններ պիտի ստանան
 բառերու տարբեր տեսակներուն վրայ, այլ եւ անգամ
 մը եւս պիտի յիշեն ինչ որ սորված էին նախորդ շրջա-
 նին մէջ, եւ սորվածնին այս կերպով աւելի խորունկ
 պիտի տպաւորուի իրենց մտքին վրայ :

Երրորդ Շրջանին ընթացքով ուսանողը պիտի մտնէ
 քառերուն կրած փոփոխութեանց մէջ : Զոր օրինակ,
 թէ ի՛նչպէս անուն մը իր սկզբնական վիճակէն ելլելով,
 տարբեր ձեւեր կ'առնէ խօսողին մտքին համեմատ :
 Հարկ չի կայ կրկնել թէ այս վերջին մասը եւս պիտի նո-
 րոգէ եւ թարմացնէ աշակերտին յիշողութեան մէջ ար-
 դէն ամբարուած գիտելիքները : Սոյն երեք շրջաններուն
 իւրաքանչիւրը առանձին հատորիկի մը մէջ ամփոփե-
 ցինք, քանզի փորձով գիտենք թէ այս կերպը ուսա-
 նողներուն շատ հաճելի է :

Կը վերջացնեմ անով, որով սկսայ յառաջարանս —
 Փորձեցիք այս Քերականութիւնն ալ : Չեմ կարծեր թէ
 հեղինակ մը կը զլանայ նուիրել օրինակ մը ո եւ է ուսուցչի,
 որ յանձն կ'առնէ քիչ մը ժամանակի զոհողութիւն գէթ
 աչքէ անցընելու համար զայն :

Իցի՛ւ թէ այս աննշան գործով քիչ մը օգնած ըլլայի
 մայրենի լեզուի կրթիչներուն, եւ դիւրացուցած ըլլայի
 ուսանողներու աշխատութիւնը :




ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ՈՒՆ

Հետևեալ թելադրութիւնները ուսուցիչներուն ուշադրութեանը
կը յանձնուին.

1. Խղճամիտ ուսուցիչ մը իր սաշիֆ իշխանացիւր
դասը նախապէս պատրաստելու է, որպէս զի շաւ ընթռնի
թէ ի՛նչ է դասին նպատակը եւ թէ ի՛նչ նախքով ու-
սանողը առաջնորդուած է անոր : Երանի՛ այն աշա-
կերներուն որ իրենց դասերը հաւատարմաբար պատ-
րաստող դասատուներ ունին :

2. Դասագրքիս բոլոր ընթացքին մէջ ուսանողին
ձեռքը տրուելու են յարմար ընթերցարաններ, զորս ու-
սուցիչը օգտակար կերպով պիտի գործածէ իբրեւ օժան-
դակ այս Քերականութեան :

3. Քերականութեան մէջ գրելու համար առաջար-
կուած նախադասութիւնները դասի ժամանակ ուսու-
ցիչը պատի սախակին վրայ գրելու է, կամ ուսանող-
ներէն մեկուն գրել տալու է, եւ, ստերու կամ կէտերու
սխալները արքագրելի կամ արքագրել տալի էսֆը, դասին
թելադրած դիտողութիւնները ընելու է :



Ա Շ Խ Ա Ր Շ Ա Ր Ա Ր

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԵՒ

ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ ՏԱՐԲԵՐ



ՅԳԶԱՆ ԱՌԱՋԻՆ

ՄԱՍՈՒՆՔ ԲԱՆԻ ԿԱՄ ԲԱՌԵՐ



Դ.Ա.Ս Ա.

ՆԵՐԱԾԱԿԱՆ — ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ

(ԵՐԷ հարցո՛ւի + ԷՂԷ)

1. Ժամացոյցը ի՞նչ կ'ընէ :

(Կրնաս պատասխանել)

— Ժամացոյցը կը զարնէ :

2. Ժամացոյցդ ո՞ւր է :

— Ժամացոյցս գրպանս է :

3. Հայրդ ո՞վ է . . . (1) Օղբ ի՞նչպէս է . . .

(1) Այս կէտերը կը ցուցնեն թէ աշակերտները սոյն հարցումներուն պատասխան տալու են :

4. Բան մը ըսէ զանգակին վրայ :

— Զանգակը կը հնչէ :

5. Բան մը ըսէ աչքիդ վրայ, գլխիդ վրայ : ...

6. Խորհէ թռչունին վրայ, և ըսէ խորհածդ :

— Թռչունը կ'երգէ :

7. Բան մը ըսէ գուլպայիդ վրայ, ֆէլիդ

վրայ : ...

8. Հանդերձս աղսոս է : Ի՞նչ բանի վրայ
խորհեցայ : Ի՞նչ ըսի հանդերձին վրայ : ...

Գիտողութիւն . — Այսպէս այլ և այլ բաներու
վրայ կրնամ խորհիլ բան մը, և ըսել .

Մեր տունը փայտաշէն է :

Արեւը մարը մտաւ :

Դրացի տիկինը մեր տունը եկաւ :

Գիտելիք . — Վերոյիշեալ օրինակներուն իւրա-
քանչիւրը նախադասութիւն կ'ըսուի, քանզի բանի
մը վրայ խորհուած և բան մը ըսուած է :

9. Ի՞նչ է նախադասութիւն :

— Նախադասութիւնն է բանի մը վրայ խոր-
հիլ եւ բան մը ըսել անոր վրայ :

Հրահանգ 1

Ա. Նախադասութիւններ շինե ըսելով թե ինչ կ'ընեն հետևեալ անասունները.

Օրինակ. — Արծիւը կը թռչի :

- | | | |
|-----------------|-----------------|------------------|
| 1. Արծիւը . . . | 3. Կովը . . . | 5. Աղաւնին . . . |
| 2. Հաւը . . . | 4. Կատուն . . . | 6. Շունը . . . |

Բ. Բան մը խորհե հետևեալ բառերուն վրայ և ի գիր առ.

Ծաղիկ, պարտէզ, լուսին, բոյս մը, կենդանի մը : (1)

Գ. Հետևեալ նախադասութեանց մեջ որոնց վրայ խորհուած և բան մը ըսուած է.

1. Դասատուն հիւանդ է : 2. Մայրս կերակուր կ'եփէ : 3. Եկեղեցին շատ պայծառ է : 4. Սողոմոն իմաստուն թագաւոր մըն էր : 5. Մովսէս հեզ մարդ էր : 6. Ծովուն ջուրը աղի է : 7. Բարի մարդիկ Աստուծոյ եւ մարդոցմէ կը վարձատրուին : 8. Զուկերը ջուրերու մէջ կ'ապրին : 9. Ամէն մարդ երջանիկ ըլլալ կ'ուզէ, բայց շատերը ապերջանիկ կ'ըլլան : 10. Իմաստուն տղան իր հայրը կ'ուրախացնէ, իսկ անմիտ տղան իր մօրը տրտմութիւն է :

Դ. Վերի նախադասութեանց մեջ գտիր բան մը ըսող մասերը ենթականերուն վրայ :



(1) Նախադասութիւնները գլխագրով սկսէ :

ԴԱՍ Բ

Բ Ա Ռ

1. Ի՞նչ կը խորհիս դպրոցիդ վրայ :

— Մեր դպրոցը գիւտօրօրիկ է :

2. Ի՞նչ անուն կուտաս այդ խորհածիդ և ը-

սածիդ : . . .

3. Նախադասութիւն մը շինէ Աստուծոյ վրայ :

— Ասուած բարի եւ ամենիմաս է :

4. Սոյն նախադասութիւնը կազմող տարրերը

որո՞նք են :

— Ասուած , բարի , եւ , ամենիմաս , է :

Գիտելի՞ք . — Անոնք որ նախադասութիւնը կը կազմեն , բառ կը կոչուին :

5. Ուրեմն ի՞նչ է բառ :

— Նախադասութիւն մը կազմող սարրերը բառ կը կոչուին :

Հրահանգ 2

Ա. Գրէ բառ բառեր :

Բ. Հետեւեալ բառերով երկու նախադասութիւններ կազմէ .

Շատ , ամառը , կ'ըլլայ , ձմեռը , տաք , ցուրտ , խի :

Գ. Հետեւեալ բառերուն վրայ խորհելով՝ նախադասութիւններ կազմէ .

Հրեշտակները , անասունը , դասատուն , դպրոցը , գնդակը , գլխարկը , ասեղը , թուղիկը , շոգենաւը , կատուն :

ԳՍՍ Գ

Խ Օ Ս Ք

1. Կրնամս միացնել հետևեալ երկու նախադասութիւնները .

Ա. Եղբայրս աղքատացաւ :	}	=
Բ. Քոյրս հարստացաւ :		

— Եղբայրս աղքատացաւ եւ քոյրս հարստացաւ :

2. Ի՞նչ բառ աւելցնելով միացուցիր զանոնք : . . .

3. Հետևեալ երկու միացած նախադասութիւնները իրարմէ զատէ .

Գարունը եկաւ , ուստի թռչունները սկսան երգել : . . .

4. Ի՞նչ կերպով բաժնեցիր զանոնք : . . .

5. Ի՞նչպէս կը միացնես հետևեալ երկու նախադասութիւնները .

Ա. Հայրս շուկայ չի գնաց :	}	=
Բ. Անիկա այսօր հիւանդ է :		

— Հայրս շուկայ չի գնաց , քանզի անիկա այսօր հիւանդ է :

Գիտելիք . — Երկու կամ աւելի նախադասութիւններ , իրարու հետ միացած , կը կազմեն մեծ նախադասութիւն մը , որ ընդհանուր բառով խօսք կ'ըսուի :

6. Ի՞նչ է խօսք :
 — Խօսքն է երկու (1) կամ անելի նախադասութիւններ իրարու հետ միացած :

7. Քանի՞ նախադասութիւններէ կազմուած է հետևեալ խօսքը .

Քարողիչը շատ ազդու խօսեցաւ , քայց ժողովուրդը չապաշխարեց : . . .

8. Ի՞նչպէս կազմուած է հետևեալ խօսքը .

Հոս է այն տղան , որ երէկ դպրոցէն փախաւ : . . .

Հրահանգ 3

Հետևեալ խօսքերը կազմող նախադասութիւնները իրարմէ գատե .

1. Արտը բերրի է , քայց անիկա ջրարբի չէ :
2. Յակոբ կ'աշխատէր դասերուն համար , սակայն անիկա մրցանակ չառաւ :
3. Վարդը գեղեցիկ է , այլ փուշերը սուր ու խոցոտիչ են :
4. Անիկա կ'երգէր ու մենք կը նուազէինք , իսկ մայրս սաստիկ կու լար :
5. Վարժապետս ծեծելով՝ գլուխս մտցուց , եթէ ոչ ես բան չէի սորվեր :
6. Եղբայրս խոժոռ է , իսկ մայրս շատ անուշ կը վարուի :
7. Ծառերը մեծցան , եւ հիմա անոնք սլտուղ կու տան :
8. Աննա շատ լաւ կը կարդայ , թեւ ինք դեռ փոքր աղջիկ մըն է :
9. Գրիգոր ժամ մը վազանձ կ'ընէ երբ իր գործը կ'աւարտի :
- 10.

(1) Երբեմն մէկ նախադասութիւնն ալ խօսք կ'ըսուի :

Սաղաքը միայն հաճելի բան չէ, այլ մանաւանդ անիկա
օգտակար է, եթե տղաք զգուշաւոր ըլլան խաղի մէջ :
11. Սխալի մայրը մեռած է, անոր համար խեղճ
տղան սուգի սեւ հանդերձ հագած է : 12. Գարունը
եկաւ, եւ բոլոր բնութիւնը վերարթնցաւ :

Գիտելիք. — Միջակէտով (.) կամ վերջակէ-
տով (:) կը բաժնուին խօսքերը, և զանոնք կազ-
մող նախադասութիւնները՝ ստորակէտով (,) :

Գ Ա Ս Գ

Ք Ե Ր Ա Կ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

1. Նախադասութիւն մը կազմող տարրերը ու-
րո՞նք են : . . .

2. Հետագայ բառերը նախադասութիւն մը
կազմած են .

Մը երէկ տղայ ծեծ ծոյլ սաստիկ կերաւ : . . .

3. Ինչո՞ւ չեն կազմած :

— Քանզի խորհուրդ մը չեն յայտնուէր :

4. Ինչո՞ւ խորհուրդ մը չեն յայտնուէր այս բա-
ռերը : . . .

5. Կրնա՞ս յիշեալ բառերը ուղիղ շարեւ որ
խորհուրդ մը յայտնեն : . . .

Դիտողութիւն. — Ասկէ կը հետեւի թէ կարգ մը բառեր իրարու քով բերելով, նախադասութիւն մը չի կազմուիր, առանց խորհուրդ մը յայտնելու :

6. Երեկ պզտիկ կասու մը : նախադասութիւն չէ՞ այս : . . .

7. Ինչո՞ւ : Ուղիղ շարուած չէ՞ այս :

— Ուղիղ շարուած է, բայց խորհուրդ յայտնուած չէ :

8. Ի՞նչ է ասոր թերութիւնը : Լրացուր : . . .

Դիտողութիւն. — Ուրեմն կարգ մը բառեր թէև ուղիղ շարուած ըլլան, երբ լման իմաստ չեն յայտներ, նախադասութիւն չեն կազմեր :

9. Ի՞նչ կը կոչես հետեւեալ երկու միացած նախադասութիւնները .

Աննա լաւ կը կարգայ, թեև անիկա դեռ փոքր աղջիկ մըն է : . . .

10. Յիշեալ խօսքը կազմող նախադասութիւնները ուղիղ են : . . .

11. Նոյն ուղիղ նախադասութիւնները խորհուրդ մը կը յայտնեն եթէ անոնք միանան ուրիշ բառով մը : Զոր օրինակ .

Աննա լաւ կը կարգայ, ուստի անիկա դեռ փոքր աղջիկ մըն է : . . .

12. Սխալ նախադասութիւններ կրնան ուղիղ խօսք մը կազմել : Օրինակով մը փորձէ : . . .

Պատուիրիւն. — Ուրեմն նախադասութիւնները, թէ ուղիղ ըլլան անոնք թէ սխալ, երբ այնպէս կը միանան իրարու հետ որ խորհուրդ մը ուղիղ չեն արտայայտեր, խօսք չեն կազմեր :

Պիտելիք. — Քերականութիւնը կը սորվեցնէ մեղի թէ ի՞նչպէս կազմելու է խօսքը, կամ, որ նոյնն է, կը սորվեցնէ ուղիղ խօսիլ :

13. Քերականութիւնը ի՞նչ կը սորվեցնէ :

— Քերականութիւնը ուղիղ խօսիլ կը սորվեցնէ :

Հրահանգ 4

Ա. Ընթերցարանի դասիդ մէջ նախադասութիւններ գտիր :

Բ. Ըսէ թէ ինչ բանի վրայ խորհուած է, և այն բանին վրայ ինչ ըսուած է :

Գ. Գրասեղանիդ վրայ խորհէ, և բան մը ըսէ գրով :

Դ. Երկու նախադասութիւններով խօսք մը շինէ :

ԳՍՍ Ե

Գ Ի Բ

1. Ի՞նչ է բառ : Ըսէ բառ մը : . . .

2. Գրէ տախտակին վրայ իմաստուն : Ի՞նչ տառերէ կազմուած է այս բառը :

— Ի, Վ, ա, ս, Տ, ռ, շ, Ա քառերէն :

3. Առանց գրելու ի՞նչպէս կը յայտնես նոյն գաղափարը, ինաստուհի :

— Արտասանութեամբ :

Գիտողութիւն. — Աւրեմն գաղափարները երկու կերպով կը յայտնուին, ձայնով և գրով :

4. Քանի՞ կերպով կը յայտնուին գաղափարները : . . .

5. Գաղափարը տուր այն բանին, որ ցերեկ տեսնես երկնքին երեսը կը փայլի, ձայնով և գրով : Այն բանին՝ որ գիշերները կը փայլի : . . .

6. Գրով յայտնէ մաքիզ մէջ եղած գաղափարը այն բանին, որով կ'ուտես, որով կը տեսնես : Ձայնով յայտնէ գաղափարը այն բանին, որ ձեր պարտէզը կայ : . . .

Գիտելիք. — Կը տեսնուի որ գաղափար մը յայտնելու, կամ, որ նոյնն է, խօսելու միջոցը ձայնն է, իսկ գործիքը լեզունն է : Գիրը ուրիշ բան չէ, բայց միայն ձայնին արտայայտիչ նշանը :

7. Ի՞նչ է գիր :

— Ձայնին արտայայտիչ նշանը գիր կ'ըսուի :

8. Գիրերը քանի՞ կը բաժնուին :

— Երկուքի, ձայնաւոր և բացաձայն :

9. Որո՞նք են ձայնաւորները :

— Ա, Ե, Է, ը, ի, ո, օ .

10. Կրնանս գրել կամ արտասանել բառ մը, առանց ձայնաւորի : . . .

ԴԱՍ 2

Ի Ր

1. (Դասարանն բռնելով թերթ մը, թրեւ մը, և այլն)
Ի՞նչ է այս . — Գիրք : Ա՞յս . — Գրիչ : Ա՞յս . —
Չանգակ . և այլն :

2. Ի՞նչ կը կոչուին ասոնք :

— Իր :

3. Ի՞նչպէս կ'իմանանք այս իրերը :

— Չգայարանով :

4. Հիմա ուրիշ երկու իրերու անուն տամ,
միտք, ուրախութիւն : Ասոնք զգայարանքով կը
գիտցուին : . . .

5. Ուրեմն ի՞նչպէս կը ճանչնանք այս իրերը :

— Անոնց վրայ խորհելով :

6. Ի՞նչ է իր :

— Ո եւ է բան, որ կը գիտցուի զգայարանով
կամ վրան խորհելով, իր կ'ըսուի :

Հրահանգ 5

- Ա. Կարդա ընթերցարանեդ մաս մը: Առ. քանի մը նախադասութիւն: Ըսէ թէ ինչ բանի վրայ խորհուած է, և ինչ ըսուած է:
- Բ. Տոյց տուր անոնց մէջ յիշուած իրերը:
- Գ. Գրէ տասը իրեր, որոնք կ'իմացուին զգայարանքով:
- Դ. Յիշէ տասը իրեր, որոնք կ'իմացուին վրան խորհելով:

ԴԱՍ Է

ԻՐ ՅՈՒՅՆՈՂ ԲԱՌԵՐ

1. (Դասադրոշմ գիրք մը առնելով) Ի՞նչ է այս:
— Գիրք:
 2. Ի՞նչ անուն կը տրուի ասոր:
— Իր:
 3. Երբ կ'ըսեմ գիրք, ի՞ր է այս:
— Ոչ, իրիկ անունը, կամ, իր ցուցնող բառն է:
 4. Գրէ տախտակին վրայ գիրք: Ի՞ր է այդ:
— Ոչ, իրը ցուցնող բառն է:
 5. Ըսէ բառեր, որ իր ցուցնեն: . . .
-

Հրահանգ Ե

Ա. Ընթերցարանի դասիդ մէջ իր ցուցնող բառերը նշանակէ՝
Ո՞րը զգայարանքով կ'իմացուի, և ո՞րը՝ վրան խորհելով:

Բ. Փրէ քսան բառեր, որ իր ցուցնեն:

Փ. Փոփր անանկ բառեր, որ իր ջի ցուցնեն, այլ՝ տարբեր բա-
ներ:

Օրինակ. — Կ'երթամ, կը խաղամ, այսօր, վաղը,
չատ, վրայ, տակ, դուն, մենք, եւ այլն:



ԴԱՍ Ը

Ն Ա Խ Ա Դ Ա Ս Ո Ի Թ Ե Ա Ն Մ Ա Ս Ե Ր Ը



Ե Ն Թ Ա Կ Ս Յ Ե Ի Ս Տ Ո Ր Ո Ք Ե Լ Ի

Փրէ տախտակին վրայ ոչխարը :

1. Ի՞նչ է այս :

— Իրի մը անունն է :

2. Ի՞նչ ընել պէտք է նախադասութիւն մը
չինելու համար զայն :

— Բան մը ըսել պէ՛տք է նոյն իրի՛ն վրայ .

Ոչխարը կը մայէ :

Դիտողութիւն. — Ասկէ կը հետեւի թէ նախա-
դասութեան մը մէջ երկու բան պէտք է . Իրի
մը անունը, եւ քան մը ըսել անոր վրայ :

3. Քանի՞ բան պէտք է նախադասութիւն մը շինելու համար : . . .

4. Նախադասութիւն մը քանի՞ մասերէ կը բաղկանայ, և ի՞նչ են անոնք :

— Նախադասութիւն մը երկու մասերէ կը բաղկանայ. իրի մը անունը, և անոր վրայ ըսուած բանը :

5. Սա նախադասութեանց երկու մասերը ուրոշէ .

Ոչխարը կը մայէ :

Զին կը վազէ :

Վարդը կը բուրէ : . . .

Գիտելիք . — Նախադասութեան այն մասը, որուն վրայ բան մը ըսուած է, ենթակայ կը կոչուի : Իսկ այն մասը, որ ենթակային վրայ բան մը կ'ըսէ, կը կոչուի ստորոգելի :

6. Ի՞նչ է ենթակայ :

— Ենթական է նախադասութեան մը այն մասը, որուն վրայ բան մը ըսուած է :

7. Ի՞նչ է ստորոգելի :

— Ստորոգելին է նախադասութեան այն մասը, որ ենթակային վրայ բան մը կ'ըսէ :

Հրահանգ 7

• Հետևեալ նախադասութեանց երկու մասերը զատե. գծով մը, և ըստ թե անոնց ո՞րը ենթակայ և ո՞րը ստորոգելի է.

Օրինակ. — Ծառը | կ'ածի :

1. Ծառը կ'ածի :
2. Մրջիւնը կ'աշխատի :
3. Մարդը մահկանացու է :
4. Մեզրը շատ անուշ է :
5. Մեր տունը քարուկիր է :
6. Աղուէսը խորամանկ կենդանի է :
7. Շուները հաւատարիմ են :
8. Եզները երկիրը կը հերկեն :
9. Կովը կաթ կու տայ :
10. Զապէլ բարի աղջիկ մըն է :

ԴԱՍ Թ

ՎԵՐԼՈՒԾ ՈՒԹԻԻՆ

1. Ո՞րն է ենթական և ո՞րն է ստորոգելին սա նախադասութեան մէջ.

Ամառը եկաւ :

— Ամառը ենթական է, եկաւ՝ ստորոգելին :

Գիտելիք. — Երբ այսպէս նախադասութեան մը ենթական և ստորոգելին կ'որոշենք, կամ, զայն կազմող մասերուն կը բաժնենք, այս գործողութիւնը վերջուծուրիւն կ'անուանենք :

2. Ի՞նչ է վերլուծութիւն :

— Նախադասութիւն մը կազմող մասերը ու
րոշելու գործողութիւնը կ'ըսուի վերլուծութիւն :

3. Վերլուծութիւնը քանի՞ կերպով կ'ըլլայ :

— Երկու . բերանացի եւ գրաւոր :

4. Ո՞րն է բերանացի վերլուծութիւնը :

— Երբ նախադասութիւն մը բերնուց կը վեր-
լուծուի , կ'ըսուի բերանացի վերլուծութիւն :

5. Ո՞րն է գրաւոր վերլուծութիւնը :

— Երբ նախադասութիւն մը գրով կը վեր-
լուծուի , կ'ըսուի գրաւոր վերլուծութիւն :

Օրինակ . — Բերանացի վերլուծութիւն .

Աղաւնին կը թռչի :

Այս նախադասութեան մէջ աղաւնին այն
մասն է , որուն վրայ բան մը ըսուած է : Ուստի
այս է ենթակիս : Կը թռչի այն մասն է , որ կը
ցուցնէ թէ ինչ ըսուած է աղաւնին ենթակային
վրայ : Ուստի այս է ստորոգելի :

Օրինակ . — Գրաւոր վերլուծութիւն .

Աղաւնին | կը թռչի :

Հրահանգ 8

Ա. Հետևեալ նախադասութիւնները վերլուծէ գրաւոր, և ապա
ըսէ բերանացի .

- | | | |
|-----------------------|------------------------|----|
| 1. Խնձորը կարմրեցաւ : | 2. Հաւը ամեց : | 3. |
| Աղբիւրը շինուեցաւ : | 4. Աստուած կը ստեղծէ : | 5. |

Տղան կը կարդայ : 6. Քոյրս լացաւ : 7. Հիւանդը
մեռաւ :

Բ. Հետևեալ ենթականերուն վրայ ստորագելիներ աւելցնելով,
նախադասութիւններ շինե.

1. Հացագործը . . . :
2. Վարժապետը . . . :
3. Պարտէզը . . . :
4. Շոգենաւը . . . :
5. Ծաղիկը . . . :
6. Դասագիրքս . . . :
7. Մուկը . . . :

Գ. Հետևեալ ստորագելիներուն քով յարմար ենթականեր դիր.

1. . . . կը լողան :
2. . . . կը թռչին :
3. . . . կը խաղան :
4. . . . կերաւ :
5. . . . հագուեցաւ :
6. . . . գրեց :
7. . . . ծանր է :
8. . . . թեթեւ է :

Դ. Ընթերցարանիդ յաջորդ դասին մեջ գտիր տասը ենթակայ
և ստորագելիները :



ԴԱՍ Ժ

ԲԱՌԵՐՈՒ ԴԱՍԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՄ ՏԵՍԱԿՆԵՐԸ



ԱՆՈՒՆ ԵՒ ԲԱՅ

1. Ի՞նչ է բառ : Յիշէ քանի մը բառեր : . . .
2. Ո՞րչափ բառ ունինք կը կարծես : Անոնք
ամէնը մէկ տեսակէ՞ են : . . .

Գիտելիք. — Լեզուին հազարաւոր բառերը, դիւ-
րութեան համար, կրնանք բաժնել քանի մը կար-
գերու, իրենց տեսակին համեմատ, զոր օրինակ,
ամպ, թռչող, գրիչ, օր, գիրք, խելիք, կեանք,
և այլն, և անոնց առանձին անուններ տալ :

3. Ի՞նչ կը ցուցնեն յիշեալ բառերը :
— Իրեր :

Դիտողութիւն. — Ուրեմն բոլոր իր ցուցնող բա-
ռերը մէկ կարգի տակ դնելով, կրնանք ընդհա-
նուր անուն մը տալ : Զոր օրինակ . անուն :

4. Այս կարգի բառերը ո՞ր մասը կը կազմեն
նախադասութեան :

— Ընդհանրապէս ենթակայի մասը կը կազ-
մեն :

5. Կրնա՞ս ըսել ուրիշ կարգ մը բառեր, որոնք
իր շէն ցուցներ : Զոր օրինակ . կը խաղաւ, կ'ու-
սեւ, կը գրեւ, և այլն : . . .

6. Ի՞նչ է այս կարգի բառերուն պաշտօնը :
— Այս տեսակ բառերը բան մը կ'ըսեն են-
թակայի մը վրայ :

7. Ուրեմն նախադասութեան ո՞ր մասը կը
կազմեն անոնք : Օրինակ մը տուր : . . .

Դիտողութիւն. — Ուրեմն բոլոր այն բառերը, ո-
րոնք բան մը կ'ըսեն ենթակային վրայ, կրնանք

նոյնպէս ուրիշ մասնաւոր անունով մը կոչել: Զոր
օրինակ . բայ (¹) :

Ց. Կրնան երկու բառեր, անուն և բայ, գոր-
ծածելով նախադասութիւն մը շինել: . . .

Հրահանգ 9

Ա. Հետևեալ նախադասութեանց մէջ ինչ տեսակ բառ է են-
թական, և ինչ տեսակ՝ ստորոգելին.

Օրինակ. — Արեւը իր ցուցնող բառ է, եղաւ բան
մը ըսող բառ է :

1. Արեւը ելաւ : 2. Հայրս եկաւ : 3. Տերեւը
թրջեցաւ : 4. Կէսօրը անցաւ : 5. Անմեղութիւնը կը
սիրուի : 6. Գիտունը կը յարգուի : 7. Աստուած
կ'օրհնէ :

Բ. Գրէ քսան բառեր, որոնց կեսը անուն ըլլայ, և կեսը՝ բայ:

Գ. Ընթերցարանի դասիդ մէջ գտիր բառեր, որ կամ անուն
ըլլան կամ բայ:

(¹) Այս դասին մէջ ծանրանալու չէ անունի կամ բայի վրայ՝ զանոնք
ծանօթացնելու համար ուսանողին, այլ հասկցնելու է թէ բառերը, դիւ-
րութեան համար, քանի մը կարգերու բաժնուած են. Լոկ ասիկա է դա-
սին նպատակը:

ԴԱՍ ԺԱ

ԵՆԹԱԿԱՆ ԵԻ ԻՐ ԼՐԱՑՈՒՅԻ ՉՆԵՐԸ

Ա. Աղջիկը կը կարէ :

1. Ի՞նչ կը կոչես ասիկա :

— Նախադասութիւն :

2. Նախադասութիւն մը կազմելու համար ի՞նչ ունենալ հարկ է :

— Ա. Բան մը, որուն վրայ բան մը խորհուած էլ ըսուած է : Բ. Բան մը, որ կ'ըսուի անոր վրայ :

3. Ասկէ հետեցներով առ նուազն քանի՞ բառ ըլլալու է նախադասութեան մը մէջ :

— Գէթ երկու բառեր ըլլալու են, անուն եւ բայ :

4. Այս երկու բառերը նախադասութեան ո՞ր մասերը կը կազմեն :

— Ենթակայ եւ ստորոգեչի :

Բ. Փոքրիկ սիրուն աղջիկը կը կարէ :

5. Ո՞ր բառերը աւելցած են Ա. նախադասութեան մէջ : . . .

6. Նախադասութեան ո՞ր մասին վրայ աւելցած են :

— Աղջիկ ենթակային վրայ :

Դիտողութիւն. — Տեսանք Ա. նախադասութեան մէջ թէ, առանց փոփոխի սիրուն բառերուն, կրնանք կազմել նախադասութիւն մը, Աղջիկը կը կարէ :

7. Արդ, Բ. նախադասութեան մէջ ջնջելով աղջիկը բառը, կրնա՞նք նախադասութիւն շինել :

— Փոփոխի սիրուն կը կարէ :

8. Նախադասութիւն է այս :

— Ոչ, քանզի միտք մը չի տար :

Դիտողութիւն. — Ուստի նոյն նախադասութեան առաջին մասին ամենէն էական բառն է աղջիկը, որ է ենթական : Ահա այս կերպով նախադասութեան մը մէջ ամենէն էական բառը, որուն վրայ ըսուած է բան մը, ինչպէս գիտենք, ենթական է : Իսկ այն բառերը, որ ենթակային վրայ աւելցած են, կ'ըսուին ենթակային լրացուցիչները :

9. Ի՞նչ է ենթակայի մը լրացուցիչը :

— Ենթակայի մը լրացուցիչներն են այն բառերը, որ կ'աւելցուին ենթակային վրայ, անոր իմաստը ամբողջացնելու համար :

Օրինակ. — Փոքրիկ աշխատասէր տղաքը կը կարդան :

Այս նախադասութեան մէջ տղաքը է միակ բառը, որուն վրայ ըսուած է բան մը, կը կար-

դան : Ուստի այս է ենթական : Ասոր վրայ ա-
ւելցած բառերն են , փոփոխ , աշխատաստեր , ու-
րոնց կ'ըսուի ենթակային շրացուցիչները : Կը կար-
դան այն բառն է , որ կը ցուցնէ թէ ինչ ըսուած
է տղայն ենթակային վրայ : Ուստի ստորոգելի է :

Հրահանգ 10

Ա. Բերանացի վերլուծե հետևեալ նախադասութիւնները վերև
տրուած օրինակին պէս .

1. Ձմրան ձերմակ ձիւնը հալեցաւ : 2. Ձեր խո-
շոր կատուն սենեակս եկաւ : 3. Կարմիր ու գեղեցիկ
վարդերը բացուեցան : 4. Փարնան սիրուն թռչունները
կ'երգեն : 5. Պարտէզին գեղեցիկ եւ պտղաբեր ծա-
ռերը մեծցան : 6. Թանձր ու խաւար ամպերը ցրուե-
ցան : 7. Մեր տանը դուռը փայտէ է : 8. Պատու-
հանին բոլոր ապակիները կոտրեցան : 9. Այս տղան
մտացի է : 10. Քու սիրտդ բարի է :

Բ. Վերի նախադասութիւնները գրաւոր վերլուծե :

Կանոն. — Նախադասութեան երկու մասերը
նախընթաց օրինակներուն պէս գծով մը բաժնէ ,
և ենթակային ներքև գիծ մը քաշէ :

Օրինակ. — Փոքրիկ աշխատասէր տղան | կը կարդայ :

Գ. Վերը տրուած օրինակներուն մէջ ենթակային շրացուցիչ-
ները վերցուր , և պարզ նախադասութեանց վերածե :

Օրինակ. — Ձիւնը հալեցաւ :



ԴԱՍ ԺԲ

ՍՏՈՐՈՒԵԼԻՆ ԵՒ ԻՐ ԼՐԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Գրէ հետևեալ նախադասութիւնը .

Ա. Իմ փոքրիկ սիրուն թռչունս կ'երգէ :

1. Ո՞րն է ենթական ասոր մէջ, և ո՞րն է ստորագրելին : . . .

2. Իմ փոքրիկ սիրուն ի՞նչ են :

— Ենթակային լրացուցիչները :

Գրէ դարձեալ .

Բ. Իմ փոքրիկ սիրուն թռչունս ամէն օր քաղցրածայն կ'երգէ :

3. Ո՞րն է ստորագրելին ասոր մէջ : . . .

4. Ի՞նչ աւելցած է, և ո՞րն վրայ : . . .

Գիտողութիւն. — Տեսանք Ա. նախադասութեան մէջ թէ, առանց ամէն օր քաղցրածայն բառերուն, կրնայ կազմուիլ նախադասութիւն մը. Իմ փոքրիկ սիրուն թռչունս կ'երգէ :

5. Արդ, Բ. նախադասութեան մէջ ջնջելով կ'երգէ բառը, կրնաս նախադասութիւն շինել : Փորձէ : . . .

Գիտողութիւն. — Ուստի նոյն նախադասութեան
երկրորդ մասին ամենէն էական բառն է կ'երգէ,
որ է ստորագելին :

Գիտելիք. — Այսպէս նախադասութիւն մը որ
քան շատ բառեր պարունակէ, գլխաւոր և էական
բառերը միշտ երկու են, ենթակայ, որ ընդհան-
րապէս իրի մը անունը կ'ըլլայ, և ստորագելի (միշտ
բայ), որոնք նախադասութեան երկու մասերը կը
կազմեն, և առանց որոնց բան չի հասկցուիր :

6. Ի՞նչ կ'ըսուէին այն բառերը, որոնք ենթա-
կային վրայ կ'աւելնային, անոր իմաստը ամբողջա-
ցնելու համար :

— Ենթակային լրացուցիչները :

Գիտողութիւն. — Նոյնպէս այն բառերը ևս, որ
ստորագելին վրայ կ'աւելնան, զայն ամբողջացնելու
համար, կ'ըսուին ստորագելիին լրացուցիչները :

7. Ի՞նչ է ստորագելիի մը լրացուցիչը :

— Ստորագելիի մը լրացուցիչներն են այն բա-
ռերը, որ կ'աւելնան ստորագելիին վրայ, անոր
իմաստը ամբողջացնելու համար :

Օրինակ. — Դպրոցին ժամացոյցը բարձրաձայն կը
հնչէ :

Ժամացոյցը եւ թակայ է, քանզի այն է բուն
բառը, որուն վրայ ըսուած է բան մը : Իսրոցիկն
ենթակային վրայ աւելցած բառն է : Ուստի եւն-
թակային շրացուցիչն է : Կը հնչէ ոտորոգելին է,
քանզի նոյն իսկ ըսուած բանն է ենթակային վրայ :
Բարձրաձայն ստորոգելին վերաբերող և զայն
ամբողջացնող բառն է : Ուստի ստորոգելին շրա-
ցուցիչն է :

Հրահանգ 11

Ա. Հետևեալ նախադասութիւնները բերանացի վերլուծե՛ վերի
օրինակին հետևողութեամբ.

1. Վարժապետը բերնուց սորվեցուց թուաբանու-
թիւնը :
2. Արեգակը կը շողայ լեռներուն վրայ եւ հո-
վիտներուն մէջ :
3. Երէկ պարտէզիս քանի մը ծառերը
չորցան :
4. Մատաղ տունկերը ամէն օր ջուր կ'ուզեն :
5. Իմ փոքրիկ եղբայրս շատ կը սիրէ երկրագործութիւնը :
6. Այս քաղցրաբոյր ծաղիկը թաղարի մէջ ծլած է :
7. Իմաստուն տղան իր հայրը ու մայրը կ'ուրախացնէ, իսկ
անմիտ տղան իր մօրը տրտմութիւն է :
8. Արծիւը շատ
բարձրէն կը թռչի :
9. Վարդագեղ արշալոյսը առաւօտուն
ծագեցաւ :
10. Յիմար կոյսերը դուրս մնացին, իսկ ի-
մաստուն կոյսերը ներս ընդունուեցան :
11. Իմաստուն
եւ աշխատասէր մարդը ամառը կը դիզէ, անիկա ձմեռ-
ուն մէջ անօթի չի մնար :
12. Իմ սիրելի հայրս այս
առտու շատ կանուխ էլաւ :
13. Երկնից սուրբ հրեշտակ-
ները անգամ մը, Քրիստոսի ծննդեան ատեն, վերը օդին
մէջ հիանալի կերպով երգեցին :

Բ. Վերի նախադասութիւնները գրաւոր վերլուծէ:

Օրինակ. — վարժապետը | բերնուց սարվեցուց
Թուաբանութիւնը :

Գ. Վերի նախադասութեանց ենթակային և ստորոգելին արտա-
ցուցիչները վերցուր, և պարզ նախադասութեանց փոխէ:

Օրինակ. — Արեգակը կը շողայ :

Դ. Նոյն վարժութիւնները ըրէ ընթերցարանի յաջորդ դասերու
մէջ:



ԴԱՍ ԺԳ

ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ԵՐԿՈՒ ԷԱԿԱՆ ԲԱՌԵՐԸ



ԱՆՈՒՆ ԵՒ ԲԱՅ

Տախտակին վրայ գրէ .

Հուսինը կը փայլի :

1. Քանի՞ տեսակ բառ կայ ասոր մէջ :

— Երկու տեսակ :

2. Ի՞նչ տեսակ բառ է յուսինը :

— Իրի մը անունն է :

Գիտելիք. — Իր ցուցնող բառերը անուն կը
կոչուին :

3. Ի՞նչ է անուն :

— Իր ցուցնող բառը անունն կ'ըսուի :

4. Յիշեալ օրինակին մէջ յուսինը անունը նախադասութեան մը մասն է :

— Ենթական :

Գիտելիք. — Ընդհանրապէս նախադասութեան ենթական անուն մը կ'ըլլայ :

5. Վերի օրինակին մէջ ի՞նչ տեսակ բառ է կը փայլի :

— Բառ մը, որ բան մը կ'ըսէ ենթակային վրայ :

Գիտելիք. — Ենթակային վրայ բան մը ըսող բառը, կամ, ստորոգելին, Քերականութեան մէջ, ըստ կը կոչուի :

6. Ի՞նչ է բայ :

— Բայը բառ մըն է, որու միջոցով բան մը կ'ըսենք ենթակային վրայ :

Գիտելիք. — Բայը միշտ նախադասութեան ստորոգելին է :

7. Կրնա՞նք նախադասութիւն մը կազմել առանց այս երկու տեսակ բառերուն, անուն և բայ : . . .

Գիտողութիւն. — Կը տեսնենք թէ լեզուին մէջ անհրաժեշտ են գէթ երկու տեսակ բառեր, անուն և բայ, զորս կրնանք կոչել հական բառեր :

Հրահանգ 12

Ա. Հետևեալ նախադասութեանց մեջ որոշե անունը և բայը.

Օրինակ. — Ոչխարը կը մայէ :

Ոչխարը , որ պարզ ենթական կը կազմէ , անուն է , քանզի իր մը կը ցուցնէ :

Կը մայէ բայ է , քանզի նախադասութեան ստորոգելին է :

1. Ոչխարը կը մայէ : 2. Ծաղիկը կը խամրի : 3. Տղան կը կարդայ : 4. Սոխակը կ'երգէ : 5. Կովը կը բառաչէ : 6. Ձին կը վազէ : 7. Հովը կը փչէ :

Բ. Հետևեալ կետերուն տեղ յարմար բայեր դիր.

Օրինակ . — Խնձորը ինկաւ :

1. Խնձորը . . . :

2. Վարդը . . . :

3. Գառը . . . :

4. Ծովը . . . :

5. Մանուկը . . . :

6. Մըջիւնը . . . :

Գ. Հետևեալ կետերուն տեղ յարմար անուններ դիր.

1. . . . կը խաղան :

2. . . . կը սորվին :

3. . . . կը վազեն :

4. . . . կու լան :

5. . . . կարդացին :

6. . . . կը նստի :

7. . . . կը պատժէ :

8. . . . կը սողայ :

Դ. Շինե ջորս նախադասութիւններ իբրև ենթակայ գործածելով անուն մը, որ ըլլայ

1. Տեղի մը

ինչպէս

Փարիզ

2. Կենդանիի մը

ինչպէս

Կով

3. Մետաղի մը

ինչպէս

Ոսկի

4. Բոյսի մը

ինչպէս

Ցորեն

} Անունը

Օրինակ

- 1. Փարիզ գեղեցիկ քաղաք մըն է :
- 2. Կովը մեզի կաթ կու տայ :
- 3. Ոսկին շատ կը փայլի :
- 4. Ցորենը ալիւր կը շինուի :
- Ե. Ընթերցարանի դասիդ մեջ անունները և բայերը որոշե՛



ԴԱՍ ԺԴ

Հ Ա Ն Դ Է Ս

- 1. Ի՞նչ է նախադասութիւն (Դաս Ա) :
- 2. Ի՞նչ է բառ (Դաս Բ) :
- 3. Ի՞նչ է խօսք (Դաս Գ) :
- 4. Ի՞նչ ուսում կ'աւանդէ Քերականութիւնը :

թաւ

5. Ի՞նչ է գիր, և քանի՞ տեսակ գիր կայ (Դաս Ե) :

մը

6. Քանի՞ կերպով կ'արտայայտենք մեր գափարը (Դաս Ե) :

քա

7. Ի՞նչ է իր : Երբ կ'ըսեմ գիրք, խնձոր, և այլն,

ըր

ե՞ն : Ուրեմն երբ կ'ըսուի խնձորը կ'ըսեմ,

եղ

խնձորին անունը, կամ, բան է որ կ'ուտուի, թէ

այդ

բառով ցուցուած ի՞րը (Դաս Զ, Է) :

ու

8. Նախադասութիւն մը քանի՞ մասերէ կը

առաջանայ, և այդ մասերը որո՞նք են (Դաս Ը) :

- 9. Ի՞նչ է ենթակայ : Ի՞նչ է ստորագելի (Դ... Ը) :
- 10. Ո՞րն է վերլուծութիւն , և քանի՞ կերպով կ'ըլլայ (Դ... Թ) :
- 11. Ի՞նչ են ենթակային և ստորագելիին լրացուցիչները (Դ... ԺԱ , ԺԲ) :
- 12. Բառերուն մէջ որո՞նք են էական կոչուածները (Դ... ԺԳ) :
- 13. Ի՞նչ է անուն : Ի՞նչ է բայ (Դ... ԺԳ) :
- 14. Բայերը նախադասութեան ո՞ր մասը կը կազմեն (Դ... ԺԳ) :



ԴԱՍ ԺԵ

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՇԱՐԱԴՐՈՒԹԵՍ

Առնենք իր մը , զոր օրինակ , աթոռ , լրագրենք զայն հետեւեալ հարցումներուն պիտանելով .

- 1. Ի՞նչ է :
- 2. Ի՞նչ բանի կը գործածուի :
- 3. Ինչո՞վ կը շինուի :

Օրինակ

- 1. Աթոռը կարասի մըն է :
- 2. Կը գործածուի նստելու համար :
- 3. Ընդհանրապէս փայտէ կը շինուի :

Սոյն երեք նախադասութիւնները կրնանք միացնել այսպէս .

Աթուը կարասի մըն է , որ կը գործածուի նստելու համար , եւ ընդհանրապէս մայտէ կը շինուի :

Հրահանգ 13

Ա. Նախընթաց օրինակին պէս խօսքեր շինե , նոյն հարցումները ընելով , եւ հետևեալ ենթականերով .

Դանակ , ասեղ , գրասեղան :

Բ. Վերլուծե նախադասութիւններդ գրաւոր և բանաւոր (բերանացի) : Որոշե անունները և բայերը :

Հրահանգ 14

Ա. Գրե իր ցուցնող տասը բառեր :

Բ. Գտիր ուրիշ տեսակ տասը բառեր , որ բան մը կ'ըսեն ենթակայի մը վրայ :

Գ. Գտիր տասը բառեր , որոնք ո՛չ իրի մը անուն են և ո՛չ բան մը կ'ըսեն իրին վրայ . այսինքն՝ ո՛չ անուն են և ո՛չ բայ :

Օրինակ . — Լեղի , թեթեւ , վրայ , մէջ , կամաց , քանզի , եւ այլն :

Դ. Աշակերտները վարը դրուած բառերուն մէջ նոյն տեսակե եղողները հետևեալ օրինակին պէս կարգաւ շարեն (1) :

(1) Այս մասը դրուած է միայն աղօտ գաղտփար մը տալու համար ուսանողին՝ նկատմամբ բառերու զանազանութեան , որուն վրայ ծանրատալու հարկ չի կայ :

Օրինակ. — Սաստիկ, ուրեմն, գեղեցիկ, մեծ
ուստի, հարուստ, ծեր, ժիր, յանկարծ, ո՛հ, բայց
այլ, ա՛խ, ես, քովը, ինք, վրայ, ետեւէն, ծառ
տուն, մարդ :

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է
Ուրեմն	Գեղեցիկ	Սաստիկ	Ո՛հ	Ես	Գովը	Ծառ
Ուստի	Մեծ	Յանկարծ	Ա՛խ	Ինք	Վրայ	Տուն
Բայց	Հարուստ				Ետեւէն	Մարդ
Այլ	Ծեր					
	Ժիր					

Սուրբ, ինչու որ, համար, երէկ, աւա՛ղ, աղքատ
ատուն, սաստիկ, անիկա, մէջտեղը, սակայն, ծանր
մենք, այո, ոչ, ինչո՞ւ, ուր, գէշ, քանզի, կանուխ
հոն, հոս, ուշ, դուն, այսօր, շուրջը, ներսը, միշտ
ամէն օր, ո՛հ, ա՛հ, բարի, տգէտ, ծոյլ, գարշելի
վաղը, օ՛հ, վա՛յ, երբ, վասն որոյ, վասն զի, թուղի
սեղան, աթոռ, քար :

Հրահանգ 15

- Ա. Հսե իրի մը անուն :
- Ասեղ :
- Բ. Նկարագրէ գայն սա հարցումներուն պատասխանելով .
- 1. Ի՞նչ է :
- 2. Ի՞նչ բանի կը գործածուի :
- 3. Ինչէ՞ն կը շինուի :

Օրինակ

- 1. Ասեղը գործիք մըն է :
- 2. Կը գործածուի կարելու համար :
- 3. Կը շինուի մետաղէ :

Գ. Յիշեալ երեք նախադասութիւնները միացուր.

Օրինակ . — Ասեղը գործիք մըն է , որ կը գործածուի կարելու համար , եւ կը շինուի մետաղէ :

Դ. Նոյն օրինակին պէս նկարագրէ հետևեալ բառերը.

Գրիչ , հաց , վերարկու :

Ե. Հետևեալ խօսքերը առանձին նախադասութեանց փոխէ.

Օրինակ . — Հրեշտակը հոգի մըն է , որ Աստուծմէ կը զրկուի , եւ մարդոց կը խօսի :

1. Հրեշտակը հոգի մըն է :

2. Աստուծմէ կը զրկուի :

3. Անիկա մարդոց կը խօսի :

1. Վարժապետը , որ բարի մարդ մըն է , մեր ուսուցիչն է , եւ շատ կ'աշխատի :

2. Ծառը տունկ մըն է , որ պարտէզին մէջ կ'աճի , եւ պտուղ կու տայ մեզի :

2. Հետևեալ նախադասութեանց բոլոր լրացուցիչները վերցուր , և միայն երկու բառերէ , ենթակայէ և ստորոգելիէ , բաղկացեալ պարզ նախադասութեան մը փոխէ.

Օրինակ . — Այս երկու եղբայրները , հեզութեամբ եւ հլութեամբ , իրենց դասերը սերտելու կ'աշխատին : =

. . . եղբայրները . . . կ'աշխատին :

1. Սա երկու առագաստաւոր նաւերը , սաստկաշունչ հովէ մը մղուելով , կ'երթան :

2. Իմ տանս բոլոր պատերը , անձրեւէն եւ հովէն զարնուելով , մեծապէս վնասուեցան :

3. Այս մեծ դպրոցին բոլոր աշակերտները ուսմամբ եւ գիտութեամբ զարգացան :



ԴԱՍ ԺԶ Դ Ե Ր Ա Ն Ո Ի Ն

1. Նախադասութիւն մը քանի՞ մասերու կը բաժնուի, և այն մասերը ի՞նչ կը կոչուին : . . .
2. Իւրաքանչիւր մաս առ նուազն քանի՞ բառ կը պարունակէ, և ինչո՞ւ համար : Որո՞նք են այդ բառերը : . . .
3. Ենթական ի՞նչ տեսակ բառ կ'ըլլայ սովորաբար :
— Անուն :
Գրէ .
Ա. Շուները օգտակար կենդանիներ են :
Բ. Քանզի անոնի տուները կը պահեն :
4. Ա. նախադասութեան մէջ ո՞րն է ենթական : . . .
5. Բ. նախադասութեան մէջ ո՞րն է ենթական : . . .
6. Որո՞նք կը պահեն տուները :
— Անոնի կը պահեն, որ է ենթական :
7. Անոնի անունն է : Որո՞նց համար ըսուած է : . . .
8. Անոնի բառին տեղ դիր շուները, և կարդա Ա. և Բ. նախադասութիւնները : . . .

Գրէ դարձեալ .

Ա. Յակոբ հիւանդ է, Յակոբ դաւաղանով կը պատի :

Բ. Մանուկները անսկզ են, թէ եւ մանուկները շատ կու լան :

Գ. Ի՞նչ բառեր կրնան դրուիլ Յակոբի և մանուկներուն տեղ . . .

10. Ի՞նչ տեսակ բառեր են Յակոբ, մանուկներ . . .

Գիտելիք. — Այդ, որովհետեւ, յիշեալ անուններուն տեղ դրուեցան անիկա, անոնի բառերը, ուրեմն այս կարգի բառեր անունի տեղ դրուող են : Անունի տեղ դրուող բառերը Գերականութեան մէջ դերասնուն կը կոչուին :

11. Ի՞նչ է դերանուն :

— Դերասնուն կ'ըսուին անունի տեղ դրուող բառեր :

12. Ու է անձ կրնայ ըսել իրեն համար ես .
Ու է անձի անուան տեղ կրնանք ըսել դուն .
Ու է անձի, կամ, բանի համար կրնանք ըսել անիկա, կամ, այն, և այլն . . .

Գիտողութիւն. — Ուրեմն միայն քանի մը գերանուններ կրնան գործածուիլ հազարաւոր իր ցուցնող բառերու, անուններու, տեղ . եւ յիրաւի դերանուն ըսուած բառերը քանի մը հատ են

միայն . ես , սեւնի , դուն , դուք , այն , ինչ
սեւնի , իրեւնի , մինչդեռ անունները և բայերը
չենք կրնար համբել :

13. Յիշէ բայեր որչափ որ կրնաս : . . .

14. Յիշէ անուններ որչափ կրնաս , և , յետոյ
անոնց ամենուն տեղ դիր դերանուններ : . . .

Գրէ .

Մենք դասերնիս գիտենք :

15. Ո՞րն է դերանունը : կրնաս զանց ընել զայն
— . . . դասերնիս գիտենի :

16. Ո՞րն է ենթական վերի նախադասութեան
մէջ :

— Մեւնի , որ զօրութեամբ կ'իմացուի :

Գիտողութիւն . — Ուրեմն , երբեմն դերանուն են
թակաները կրնան զանց առնուիլ և զօրութեամբ
իմացուիլ :

17. Որո՞նք են զանց առնուած ենթակաները
հետեւեալ նախադասութեանց մէջ .

1. Հացս կերայ :
2. Գիտենք որ մահկանացուներ
ենք :
3. Ճամբանիս հատցուցինք :
4. Ճաշերնիդ ըրի՞ք :
5. Գիրդ գրէ :
6. Առէք , կերէք այս հացը :
7. Ժամ մը
խաղացի :
8. Ազոյս կերաւ :
9. Ամէն օր գերեզման գնաց
ու լացաւ : . . .



Հրահանգ 16

Ա. Հետևեալ նախադասութեանց մեջ նշանակե դերանունները, և ըսէ թէ որ անունի տեղ դրուած են.

1. Ես դասս կը սիրեմ :
2. Մենք կը պատուենք ծերերը :
3. Անոնք տեսան զիս , երբ ես տղոց հետ էի :
4. Դասատուն պատժեց քոյրս , քանզի անիկա յանցանք գործեց :
5. Դասընկերս բարի տղայ մըն է , դասս սերտելու համար ինք միշտ կ'օգնէ ինծի :
6. Սպասուհիս արձակեցի , քանզի անիկա շատ ծոյլ էր :

Բ. Հետևեալ նախադասութեանց մեջ դիր յարմար դերանուններ այն անուններուն տեղ, որոնք կրկնուած են.

1. Եթէ տղան բարի է , տղան կը սիրուի :
2. Աստուած ամենակարող է , Աստուած մեղաւորին կը ներէ :
3. Հայրս այսօր տուն եկաւ , հայրս տկարացած տեսայ , քանզի հայրս սանդուխէն ինկած էր :
4. Աղամ եւ Եւա դրախտէն արտաքսուեցան , քանզի Աղամ եւ Եւա արգիլեալ պտուղէն կերան :
5. Ընկերներս դպրոցին առջեւ ինծի չի սպասեցին , բայց ես ընկերներուս չի նեղացայ :
6. Ես քրոջս ներեցի , բայց մայրս պատժեց քոյրս :
7. Եղբայրս հիւանդ է , ուստի եղբօրս տեղ խանութ կ'երթամ :

Գ. Հետևեալ նախադասութեանց մեջ կետերուն տեղ յարմար դերանուններ դիր.

1. Եղբայրս Միջագիւղէն եկաւ , . . . տեսա՞ր :
2. Դասընկերդ հիւանդ է , . . . այցելութիւն տալու ես :
3. Թովմաս եւ քոյրը կորսնցուցին . . . խաղալիքը , ուստի . . . չեն կրնար խաղալ :
4. . . . կարդացին , . . . աղօթեցինք :
5. . . . հայրդ կը սիրես , . . . քեզ կը սիրէ :
6. Պզտիկ քոյրս կը հնազանդի , . . . կը յարգեմ :

Դ. Ընթերցարանի դասիդ մեջ որոշէ դերանունները.



ԳԱՍ ԺԷ

ԵՆԹԱԿԱՅ, ՍՏՈՐՈԳԵԼԻ ԵՒ ԼՐԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Գրէ .

Կատուն եղբորս ոտքը խածաւ :

1. Ո՞րն է ենթական այս նախադասութեան մէջ : Ի՞նչ տեսակ բառ է : . . .

2. Ո՞րն է ստորոգելին : Ի՞նչ տեսակ բառ է Ուրիշ տեսակ բառ մը ստորոգելի կ'ըլլայ : . . .

3. Որո՞նք են ստորոգելիին լրացուցիչները :

— Եղբորս ոտքը, քանզի անոնի խածաւ ստորոգելիին վրայ աւելցած են, անոր իմաստը ավելորդացնելու համար :

4. Ի՞նչ տեսակ բառեր են ասոնք :

— Անուն :

Դիտողութիւն. — Ուրեմն անունները միշտ են թական չեն, կրնան լրացուցիչներ ըլլալ ստորոգելիի :

Գրէ .

Եղբորս կատուն ոտքս խածաւ :

5. Ո՞րն է ենթական ասոր մէջ : Ո՞րն է լրացուցիչը : Ի՞նչ տեսակ բառ է նոյն լրացուցիչը :
— Անուն :

Գիտելիք. — Ուրեմն անունները կրնան ըլլալ նաև ենթակայի լրացուցիչներ :

Գրէ .

Անիկա հիւանդացաւ :

6. Ասոր մէջ ի՞նչ տեսակ բառ է ենթադրանք

Անոր քայրը հիւանդացաւ :

7. Ասոր մէջ ո՞րն է ենթակային լրացուցիչը ?
Ի՞նչ տեսակ բառ է այն :

— Դերանուն :

Գիտողութիւն. — Ուրեմն դերանունները միշտ ենթակայ չեն , այլ կրնան ըլլալ նաև ենթակայի լրացուցիչ :

Գրէ .

Վարժապետը եկաւ , զանիկա տեսանք :

8. Ասոր մէջ ո՞րն է ստորոգելիին լրացուցիչը ?
Ի՞նչ տեսակ բառ է այն : . . .

Գիտողութիւն. — Ուրեմն դերանունները կրնան ըլլալ նաև ստորոգելիի լրացուցիչ :

Հրահանգ 17

Ա. Ընթերցարանի դասիդ մէջ գտիր ենթակայի և ստորագելի
լրացուցիչներ, և ըսէ թէ ինչ տեսակ բառեր են անոնք:

Բ. Շինէ հինգ նախադասութիւններ ենթակայի և ստորագելի
անուն լրացուցիչներով, և հինգ նախադասութիւններ դերանուն լրացուցիչներով,
նաև հինգ նախադասութիւններ գորութեամբ իմացուած
դերանուն ենթականերով:



ԴԱՍ ԺԸ

Բ Ա Ռ Ա Ջ Ն Ն Ո Ի Թ Ի Ի Ն

1. Հետևեալ նախադասութեանց մէջ ո՞ր բառը
անուն է, ո՞րը՝ դերանուն և ո՞րը՝ բայ:

Աբրահամ նահապետ հաւատաց, եւ այն արդա-
րութիւն սեպուեցաւ անոր:

— Աբրահամ անուն է, փանգի անձի մը անուն է, եւ այլն:

Գիտելիք. — Երբ այսպէս կ'որոշենք բառերը, և
կ'ըսենք թէ ինչ տեսակ բառեր են, զոր օրինակ,
երբ նախադասութեան մէջ կը գտնենք իր ցուցնող
բառ մը, և կ'անուանենք զայն անուն, կը գըտնենք
անուան տեղ դրուած բառ մը, և կ'անուանենք
զայն դերանուն, և այլն: Այս գործողութեան
բառագնանորթիւն կ'ըսենք:

2. Ի՞նչ է բառազննութիւն :

— Բառազննութիւնն է այն գործողութիւնը, որով նախադասութեան մէջ բառերուն տեսակները կ'որոշենք :

Գիտելիք. — Բառազննութիւնը կրնայ կատարուիլ թէ՛ բերանացի և թէ՛ գրաւոր :

Օրինակ. — Բերանացի Բառազննութիւն :

Աղաւնին կը սիրէ ծաղիկները . ուստի կը մշակէ զանոնք :

Աղաւնին անձի մը անունն է : Ուստի անունն է :
Կը սիրէ բան մը կ'ըսէ Աղաւնին վրայ : Ուստի բայն է :

Ծաղիկները իր կը ցուցնէ : Ուստի անունն է ,
և այլն :

Օրինակ. — Գրաւոր Բառազննութիւն :

Անուն	Դերանուն	Բայ
1. Աղաւնին	1. Չանոնք	1. Կը սիրէ
2. Ծաղիկները		2. Կը մշակէ

Հրահանգ 18

Ա. Հետևեալ նախադասութեանց բառագնութիւնը կատարելով բերանացի և գրաւոր, վերի օրինակներուն պէս.

1. Ես դաշտին մէջ այժի երամակ մը տեսայ : 2. Յովսէփ գեղեցիկ ճանչցաւ իր եղբայրները, այլ անոնք չի ճանչցան զինք : 3. Իմ կարգս մրցանակ առաւ : 4. Անոնք կաթ ունին, կը խմեն զայն : 5. Դուք եղբայր տեսա՞ք. անիկա գիւղ գնաց :

Բ. Ընթերցարանի դասիդ մէջ բերանացի և գրաւոր բառագնութիւն կատարէ :




ԴԱՍ ԺԹ

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ

Օրինակէ հետևեալ հարցումները և իւրաքանչիւրին ներքև գրէ պատասխանը, այնպէս որ նախադասութիւնը կատարեալ ըլլայ .

Օրինակ

Հարցում . — Մարդկութեան նախահայրը ո՞վ էր :
Պատասխան . — Մարդկութեան նախահայրն էր Ադամ :



1. Ո՞վ էր Օսմանեան Պետութեան հիմնադրի-
րը
2. Թուրքիոյ մայրաքաղաքը ո՞րն է
3. Մենք քանի՞ զգայարանք ունինք
4. Ո՞վ գտաւ Ամերիկան
5. Մեր երկրագնդին ձեր ի՞նչ է
6. Որո՞նք ըրած են հեռագրի, շոգեկառքի և
շոգենառի գիւտերը

ԴԱՍ Ի

ՊԱՐԶ ԵՒ ԲԱՂԱԴՐԵԱՒ ԵՆԹԱԿԱՅ ԵՒ ՍՏՈՐՈԳԵԼԻ

1. Նախադասութիւն մը քանի՞ մասերու կը
բաժնուի, և ի՞նչ են անոնք
2. Ո՞րն է ենթական և ստորոգելին հետեւեալ
նախադասութեան մէջ .
Մատաղ տունկերը ամէն օր ջուր կ'ուզեն
3. Ի՞նչ են մասսաղ և ամեն օր բառերը .
— Ենթակային եւ ստորոգելիին շրացուցիչ-
ներն են .
4. Ուրեմն ինչո՞ւ երեք մասի չի բաժնուիր նա-
խադասութիւնը . Լրացուցիչը անոր մէկ մասը չէ .

— Ոչ, քանզի լրացուցիչները միայն ենթակա են ստորագելին կ'ընդլայնեն :

Գիտելիք. — Երբ ենթական կամ ստորագելի իրենց լրացուցիչներով ընդլայնուած են, քաղաքադրեալ ենթակայ կամ ստորագելի կը կոչուին իսկ առաջին ենթակային մէջ պարզ ենթակայ կամ ստորագելի կը կոչուին :

5. Ի՞նչ է պարզ ենթակայ կամ ստորագելի
— Երբ ենթական կամ ստորագելին լրացուցիչ չունին, կ'ըսուին պարզ ենթակայ կամ պարզ ստորագելի :

Օրինակ. — Ծառը կ'աճի :

6. Ի՞նչ է բաղադրեալ ենթակայ կամ ստորագելի :

— Երբ ենթական կամ ստորագելին լրացուցիչ ունին, կ'ըսուին քաղաքադրեալ ենթակայ կամ քաղաքադրեալ ստորագելի :

Օրինակ. — Կանաչ ծառը միշտ կ'աճի :

Հրահանգ 19

Ա. Հետևեալ նախադասութեանց մէջ պարզ և բաղադրեալ ենթակաները և ստորոգելիները որոշե.

1. Ձին վազեց :
2. Այս սեւ զօրեղ ձին վազեց :
3. Այս սեւ զօրեղ ձին յանկարծ գիւղին մէջ վազեց :
4. Տասը ձիեր միասին վազեցին :
5. Բոլոր պարտէզին բոյսերը օդին տաքութենէն չորցան :
6. Մայրս հիւանդացաւ :
7. Մեր որսի շունը շատ արթուն է :
8. Ճամբան քարոտ է :
9. Կովը կը բառաչէ :
10. Հնազանդ տղայք փայլուն ապագայ կ'ունենան :
11. Գարունը եկաւ . բնութիւնը զարդարուեցաւ :
12. Չմբան ցրտաշունչ հովերը սաստիկ կը փչեն :
13. Ես յովէն առաւօտ կանուխ կ'ելլեմ :

Բ. Վերի օրինակները գրաւոր ձևով ևս ներկայացուր :

Օրինակ

ԲԱՂԱԴՐԵԱԼ ԵՆԹԱԿԱՅ		ԲԱՂԱԴՐԵԱԼ ՍՏՈՐՈԳԵԼԻ	
Լրաց. ենթակայ	Պարզ ենթակայ	Լրաց. ստորոգելի	Պարզ ստորոգելի
Իմ գեղեցիկ	տունս	անձրևէն մեծապէս	վնասուեցաւ

Գ. Ընթերցարանի յաջորդ դասիդ մէջ նոյն վարժութիւնները ըրէ :



ԴԱՍ ԻԱ

ՅԱՏԿՈՒԹԻՒՆ ՅՈՒՅՆՈՂ ԲԱՌԵՐ

1. Որո՞նք են խօսք մը կազմող տարրերը :
— Բառերը :
2. Քանի՞ տեսակ բառեր սորվեցանք մինչև հիմա , և ի՞նչ կը կոչուին անոնք : . . .
3. Որո՞նք են էական բառերը :
— Անունը (կամ , դերանունը) եւ բայը էական բառեր են :
4. Խորհուրդ մը լիովին յայտնելու համար բաւական են յիշեալ երեք տեսակ բառերը : . . .

Դիտողութիւն. — Խօսքի մը շէնքը շինելու համար բաւական չեն մէկ երկու տեսակ նիւթեր , անուն , դերանուն , բայ : Հարկ են ուրիշ տարրեր ևս :

Բան մը ըսէ վարդին վրայ .

Օրինակ. — Վարդը կը բուրէ :

5. Ո՞ր վարդը կը հասկնաս երբ կ'ըսուի .
Վարդը կը բուրէ :

— Ամէն իր որ վարդ անունը ունի :

6. Արդ, եթէ կ'ուզեմ ըսել թէ ի՞նչ յատկութիւն ունի այդ վարդը, որ կը բուրէ, ի՞նչ տեսակ բառ աւելցնելու եմ:

— Յասկութիւն ցուցնող բառեր:

7. Կրնաս անուն մը կամ դերանուն մը աւելցնել:

— Ոչ, քանզի անունը կը ցուցնէ իրը, ոչ թէ իրին յասկութիւնը:

8. Ուրեմն կրնաս գտնել ուրիշ տեսակ բառ մը, որ այդ իրին, վարդին, մէկ յատկութիւնը ցուցնէ: . . .

9. Ո՞ր վարդը կը հասկնաս երբ կ'ըսուի.

Կարմիր վարդը կը բուրէ:

— Այն կարգի վարդերը, որ կարմիր յասկութիւնը ունին:

10. Յիշէ իր մը, զոր օրինակ, ջուրը: Քանի՞ յատկութիւններ կրնաս համրել զորս ունի ջուրը:

— Տաք, սառ, սառած, աղի, լեղի, անուշ, եւ այլն:

Հրահանգ 20

Ա. Հետևեալ իրերուն յատկութիւնները գտիր, և իւրաքանչիւրին տակ կարգաւ գրէ.

Ոսկի, արծաթ, ածուխ, ծառ, մարդ, երկաթ, ճիւղ, բամպակ:

Բ. Հետևեալ բառերուն որք իր կը ցուցնէ և որք՝ յասկուրիս
 Բարի , անուշ , մութ , թուղթ , շէնք , մեծ , ձեռք
 ամսա , աղուոր , համեղ , գրասեղան , գեղեցիկ , մարդ
 լեզի , խորունկ , նոր , երկաթ , քաղցր , թեթեւ , տակ
 տակ , քար , ծանր , փայտ , դպրոց , պաղ , կլոր , տ
 րեւ , ասեղ , տուն , հաստ :

Գ Ա Ս Ի Բ

ԵՆԹԱԿԱՅԻ ԵՒ ՍՏՈՐՈԳԵԼԻԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ

Ա Մ Ա Կ Ա Ն

Գրէ .

Պայծառ արեւը կը շողայ :

1. Ո՞րն է ենթական այս նախադասութեան
 մէջ , և ի՞նչպիսի ենթակայ է : . . .

2. Ո՞րն է իր լրացուցիչը : . . .

3. Պայծառ բառը ի՞նչ կը ցուցնէ :

— Արեւին մէկ յասկուրիւնը կը ցուցնէ :

Գրէ դարձեալ .

Երկինքը պայծառ լուսաւորներով կը շողայ :

4. Ո՞րն է ստորոգելին ասոր մէջ , և ի՞նչպիսի
 ստորոգելի է : . . .

5. Ո՞ր լրացուցիչներով ընդլայնուած է ստորագրելին : . . .

6. Հոս որո՞ւ յատկութիւնը կը ցուցնէ պայծառ : . . .

7. Ուրեմն յատկութիւն ցուցնող բառերը ի՞նչ պաշտօն կը կատարեն նախադասութեան մէջ :

— Ենթական եւ ստորագրելին կ'ընդլայնեն իբր լրացուցիչներ :

Գիտելիք. — Յատկութիւն ցուցնող բառերը, Քերականութեան մէջ, կը կոչուին ածական :

8. Ի՞նչ է ածական :

— Յատկութիւն ցուցնող բառերը ածական կը կոչուին :

Հրահանգ 21

Ա. Հետեւեալ նախադասութեանց մէջ նշանակէ բոլոր այն բառերը, որ ածական են, և ըսէ թէ ո՞ր իրի յատկանիշն են . . .

Օրինակ . — Սիրուն փոքրիկ աղջիկ մը ինծի նամակ մը գրեց :

Սիրուն փոքրիկ են ածական, քանզի աղջկան յատկութիւնը ցուցնող բառերն են :

1. Զով զեփիւռը կը փչէ : 2. Բարակ թուղթը շուտ կը պատռի : 3. Երկու բարձրահասակ մարդիկ ինծի պատահեցան : 4. Պզտիկ տղայք եթէ աշխատին, կարդալ

կը սորվին : 5. Բարի աղջիկները իրենց մայրերուն կ'օգնեն : 6. Հասուն պտուղը անուշ կ'ըլլայ : 7. Մամբած ծաղիկները կը թափին :

Բ. Հետևեալ անուններուն վրայ յարմար ածականներ դիր, և ենթական ընդլայնե, կամ, բաղադրեալի փոխե.

1. . . . աչակերտը կը գովուի :
2. . . . տղայք դաս կը սերտեն :
3. . . . ծառը շուք կու տայ :
4. . . . տուները քարով կամ տախտակով կը շինուին :
5. . . . մարդիկ զԱստուած կը պաշտեն :
6. . . . մեղուն մեղր կը ժողվէ :
7. . . . շունը կը սիրէ իր տէրը :

Գ. Հետևեալ ածականներուն առջև անուններ դիր.

1. Տգէտ . . . :
2. Զուարթ . . . :
3. Անուշ . . . :
4. Սուտ . . . :
5. Խորունկ . . . :
6. Սուրբ . . . :
7. Դժուար . . . :
8. Լաւ . . . :
9. Գեղեցիկ . . . :
10. Կարմիր . . . :

Դ. Ընթերցարանի այս աւուր դասիդ մեջ բոլոր ածականները ստորագծե.

Հրահանգ 22

Ա. Հետագայ նախադասութիւնները վերլուծե բերանացի և գրաւոր.

Օրինակ. — Բերանացի վերլուծութիւն :

Դժուար դասերը կը յոգնեցնեն աչակերտը :

Դժուար դասերը է բաղադրեալ ենթական :

Դասերը է պարզ ենթական, որ ընդլայնուած է դժուար ածականով մը :

Կը յոգնեցնեն աշակերտք է բաղադրեալ
ստորագելի :

Կը յոգնեցնեն է պարզ ստորագելի, որ ընդ-
լայնուած է աշակերտք անուանով :

1. Դժուար դասերը կը յոգնեցնեն աշակերտը :
2. Սա գիւղը մեծ խանութ մը շունի :
3. Հիւանդ մարդը փափուկ անկողնոյ մէջ պառկելու է :
4. Հաւատարիմ եւ գործունեայ սպասուհին միշտ կը գնահատուի իր տան տիկինէն :
5. Զօրեղ ջորին ծանր բեռ կրնայ կրել :

Բ. Տրուած նախադասութիւնները գրաւոր վերլուծե.

Օրինակ. — Գրաւոր վերլուծութիւն :

ԲԱՂԱԴՐԵԱԼ ԵՆԹԱԿԱՅ		ԲԱՂԱԴՐԵԱԼ ՍՏՈՐՈԳԵԼԻ	
Լրաց. ենթակայ	Պարզ ենթակայ	Պարզ ստորագելի	Լրաց. ստորագելի
Դժուար	գործերը	կը յոգնեցնեն	աշակերտը

Գ. Ընթերցարանի դասիւղ մեջ ածականները որոշե.

Հրահանգ 23

Ա. Հետագայ նախադասութեանց բերանացի բառագննութիւնը կատարե.

Օրինակ. — Ծոյլ եւ անառակ տղան չի յաջողիր դասերուն մէջ, անիկա զինքը եւ ծնողքը աղքատ մարդ կ'ընէ :

Ծոյլ և անառակ են ածական, քանզի աղուն
յառիւթիւնը կը ցուցնեն :

Տղան իր ցուցնող բառ է : Աւասի անուն է :
Զի յաջողիւր բան մը կ'ըսէ աղուն վրայ : Աւս-
տի բայ է :

Մէջ ծանօթ բառ չէ ինծի :

Անիկա, տղան անունին տեղ դրուած ըլլալով,
դերանուն է, և այլն :

Ատուած երկինքը ու երկիրը ստեղծեց մեծ խնամ-
տութեամբ եւ անասնման կարողութեամբ, եւ Անիկա
այս զարմանալի գործը կատարեց միայն խօսքով :

Բ. Վերի խօսքին գրաւոր բառագնմութիւնը ըրէ :

Օրինակ. — Գրաւոր բառագնմութիւնն է :

Ծոյլ եւ անառակ տղան չի յաջողիւր դասերուն մէջ,
անիկա թէ՛ զինքը եւ թէ՛ ծնողքը աղքատ մարդ կ'ընէ :

ԱՆՈՒՆ	ԳԵՐԱՆՈՒՆ	ԲԱՅ	ԱԾԱԿԱՆ	ԱՆԾԱՆՕԹ ԲԱՌԵՐ
1. Տղան	1. Անիկա	1. Զի յաջողիւր	1. Ծոյլ	1. Եւ
2. Դասերուն	2. Զինքը	2. Կ'ընէ	2. Անառակ	2. Մէջ
3. Ծնողքը			3. Աղքատ	3. Թէ
4. Մարդ				

ԴԱՍ ԻԳ

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՇԱՐՍԴՐՈՒԹԵԱՆ

Հետևեալ հարցումներուն պատասխանելով՝ շինէ նախադասութիւններ, և ապա վերածէ զանոնք երկու նախադասութիւններէ բաղկացեալ խօսքի մը .

1. Ի՞նչ է :
2. Ո՞ւր է :
3. Ինչո՞վ անուանի է :

Օրինակ. — Փարիզ :

1. Փարիզ մեծ քաղաք մըն է :
2. Ֆրանսայի մէջ է :
3. Անուանի է իր գեղեցկութեամբ :

Փարիզ, որ մեծ քաղաք մըն է Ֆրանսայի մէջ, անուանի է իր գեղեցկութեամբ :

1. Կ. Պոլիս :
2. Բնակած գիւղը :
3. Նեղոս :

Հրահանգ 24

Ա. Գրե նախադասութիւն մը միայն երկու բառերով, որոնց մէկը *անուշ* ըլլայ և միւսը՝ *բայ* :

Բ. Գրե նախադասութիւն մը երեք բառերով, որոնց մէկը ըլլայ *անուշ*, մէկը՝ *ածական* և միւսը՝ *բայ* :

Գ. Գրե երկու նախադասութիւններ, իրարու կապակցուած, որոնց մէջ գտնուին *անուշ*, *դերանուշ*, *բայ* և *ածական* :

Հրահանգ 25

Պարզ ենթակայով մը և պարզ ստորոգելիով մը շինե փոքր նախադասութիւն մը, և ապա, հետզհետե լրացուցիչներ աւելցնելով, մեծցուր նախադասութիւնը՝ ընդլայնելով ենթական և ստորոգելին որչափ որ կրնաս :

Օրինակ

Ե Ն Թ Ա Կ Ա Յ

Ս Տ Ո Ր Ո Գ Ե Լ Ի

1. Տղան	կը մեծնայ :
2. Այս տղան	արագ կը մեծնայ :
3. Այս փոքր տղան	արագ կը մեծնայ դպրոցին մէջ :
4. Մեր եղբոր այս փոքր տղան	արագ կը մեծնայ <i>օղակէ</i> դպրոցին մէջ :
5. Մեր եղբոր այս փոքր <i>բայց որք</i> տղան	արագ կը մեծնայ <i>սա դիմացի</i> օղակէ դպրոցին մէջ :
6. Մեր եղբոր այս փոքր <i>բայց հօրմէ մօրմէ</i> որք տղան	զարմանալի կերպով արագ կը մեծնայ <i>սա դիմացի օղակէ</i> դպրոցին մէջ :

Աշակերտը

կը սորվի (1) :

(1) Վերի օրինակին պէս մեծցուր նախադասութիւնը :

ԴԱՍ ԻԴ

Հ Ա Ն Դ Է Ս

1. Սովորաբար ի՞նչ տեսակ բառ ենթակայ կ'ըլլայ (Դաս ժ2) :
2. Ուրիշ ո՞ր տեսակ բառ ենթակայ կրնայ ըլլալ (Դաս ժ2) :
3. Ի՞նչ է դերանուն (Դաս ժ2) :
4. Անունները թէ դերանունները շատ են : Յիշէ՛ք քանի մը դերանուններ (Դաս ժ2) :
5. Անունները միշտ ենթակայ են : Ուրիշ ի՞նչ կրնան ըլլալ : Օրինակ տուր (Դաս ժէ) :
6. Դերանունները կրնան լրացուցիչ ըլլալ : Օրինակ (Դաս ժէ) :
7. Ի՞նչ է բառազննութիւն : Քանի՞ կերպով կ'ըլլայ (Դաս ժԸ) :
8. Լրացուցիչները նախադասութեան մէկ մասը կը կազմեն : Հապա ի՞նչ բանի կը ծառայեն (Դաս Ի) :
9. Ի՞նչ է պարզ ենթակայ, պարզ ստորոգելի (Դաս Ի) :
10. Ի՞նչ է բաղադրեալ ենթակայ, բաղադրեալ ստորոգելի (Դաս Ի) :

11. Այսպիսի նախադասութիւն մը, այսինքն
լրացուցիչներ պարունակող ենթակայի և ստորո
գելի մէկ գրաւոր ձևը, շինէ (Հրահանգ 19) :

12. Էական բառերը տրո՞նք են (Դաս ԻԱ) :

13. Իրին յատկութիւնը ցուցնող բառը ի՞նչ կը
կոչուի (Դաս ԻԲ) :

14. Ածականները ի՞նչ բանի կը ծառայեն նա
խադասութեան մէջ (Դաս ԻԲ) :



ԴԱՍ ԻԵ

ՍՏՈՐՈԳԵԼԻԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ

Մ Ա Կ Բ Ա Յ

Գրէ .

Մեր ծերունի երէցը մեռաւ :

1. Ասոր ենթական պարզ է թէ բաղադրեալ : . . .

2. Ստորոգելին ալ բաղադրեալ (կամ, ընդ
լայնուած) է : . . .

3. Ի՞նչ յարմար լրացուցիչ կրնաս աւելցնել
վրան, եթէ հարցուի ե՞րբ մեռաւ :

— Այսօր :

Մեր ծերունի երէցը այսօր մեռաւ :

4. Ուրիշ ի՞նչ կրնաս հարցնել :
— Ո՞րք մեռաւ :

Մեր ծերունի երէցը այսօր հոս մեռաւ :

5. Ուրիշ ի՞նչ կրնաս հարցնել :
— Ի՞նչպէս մեռաւ :

Մեր ծերունի երէցը այսօր հոս յանկարծ մեռաւ :

Գրէ դարձեալ .

Ա. Անզգամ տղայք չարացար կը պատժուին :

6. Ի՞նչպէս կը պատժուին անզգամ տղայք :
— Չարացար :

Գրէ դարձեալ .

Բ. Ժամացոյցը հիմա զարկաւ :

7. Ժամացոյցը ե՞րբ զարկաւ :
— Հիմա :

Գրէ նաև հետագան .

Գ. Մանչերը եւ աղջիկները հոս կը կարդան :

8. Ո՞ւր կը կարդան անոնք :
— Հոս :

9. Ի՞նչ կը ցուցնէ չարացար Ա. նախագասու
թեան մէջ :

— Կերպ կը ցուցնէ :

10. Ի՞նչ կը ցուցնէ հիմա Բ. նախադասութեան մէջ :

— Ժամանակ կը ցուցնէ :

11. Ի՞նչ կը ցուցնէ հոս Գ. նախադասութեան մէջ :

— Տեղ կը ցուցնէ :

Գիտելիք. — Կերպ (ինչպէս), ժամանակ (երբ) և տեղ (ուր) ցուցնող բառերը, ընդհանուր անունով, պարագայ կ'ըսուին :

12. Ի՞նչ է պարագայ :

— Կերպ, ժամանակ եւ տեղ ցուցնող բառերը պարագայ կ'ըսուին :

Գիտելիք. — Բայի մը պարագան ցուցնող բառը, Քերականութեան մէջ, մակբայ կ'ըսուի :

13. Ի՞նչ է մակբայ :

— Բային մէկ պարագան ցուցնող բառը մակբայ կ'ըսուի :

14. Վերի օրինակներէն հետեցնելով, մակբայները նախադասութեան մը մասին լրացուցիչները կ'ըլլան :

— Ստորագելիին :



Հրահանգ 26

Ա. Հետևեալ նախադասութեանց մեջ մակբայները ստորագծե.

1. Հովը սաստիկ կը փչէ :
2. Այսօր այգիիս մէջ գործէ :
3. Վարդուհին կանուխ կ'ելլէ :
4. Փոքր աղջիկը շատ կամաց կը քալէ :
5. Անձրեւը յանկարծ սկսաւ :
6. Վաղը քննութիւն ունինք :
7. Եղբայրս ուշ հասաւ :
8. Ձին արագ կը վազէ :
9. Պետրոս դառնապէս լացաւ , երբ դուրս ելաւ :
10. Երէկ շարունակ ձիւն տեղաց :

Բ. Վերոգրեալ մակբայները բային ձր պարագան կը ցուցնեն. Բերնուց ըսէ :

Գ. Հետևեալ նախադասութեանց պարզ ստորոգելիներուն վրայ մակբայ լրացուցիչներ աւելցուր.

1. Եղբայրս կը կարդայ (ի՞նչպէս) :
2. Մենք ամէնքս պիտի ուտենք (ո՞ւր) :
3. Մեր դպրոցը գոցուեցաւ (ե՞րբ) :
4. Կինը պոռաց (ո՞րչափ) :
5. Մարիամ կ'երգէ (ի՞նչպէս) :
6. Տուն մը բռնկեցաւ (ի՞նչպէս , ո՞ւր եւ ե՞րբ) :
7. Վարժապետը քաղաքավար անձ մըն էր (ո՞րքան քաղաքավար) :
8. Սենեակը խաւար է (ո՞րքան) :
9. Օդը սաստիկ տաք է (ո՞րքան սաստիկ) :
10. Քարոզիչը խօսեցաւ (ի՞նչպէս) :

Դ. Հետևեալ նախադասութիւնները լրացուր յարմար մակբայներով, կամ, ուրիշ խօսքով, պարզ ստորոգելիները բաղադրեալի փոխէ.

1. Պետրոս . . . ելաւ եւ . . . լացաւ :
2. . . . ծովը խռոված է :
3. Մեր ուսուցիչը . . . բարկացաւ :
4. . . . դպրոց գացի , բայց Գարեգին . . . չի կար :
5. . . . դպրոց չունինք :
6. . . . խաղալու գացինք եւ . . . ուրախացանք :
7. Անդրանիկ . . . կ'աշխատի , բայց . . .

կը շարժի : 8. . . . գերեզման մը տեսայ , . . . թաղուած
 էր մանուկ մը : 9. Մարտիրոս աստուծոյն . . . ինկաւ եւ
 . . . վիրաւորուեցաւ : 10. . . . ձմեռ եկաւ , որք տղայ
 մը տեսայ , որ . . . կը դողար . ըսի . . . ձայնով , Ո՞ր
 ես , . . . կու գաս ; . . . կու լաս , եկուր , . . . տաքցիր

Հրահանգ 27

Ա. Հետևեալ նախադասութեանց ստորագելիները ընդլայն
 այնպիսի մակբայներով , որ յարմար լրացուցիչներ ըլլան .

1. Եղբայրս Յովսէփ լացաւ :
2. Հիւսիսային հովը
կը փչէ :
3. Եղբօրս հետ տունէն բաժնուեցանք :
4. Յաւ
կոր կը պտտի :
5. Պարտէզին ծաղիկները կը բուրեն :
6. Երկու ժամ անցաւ :
7. Լուսինը կը շողշողայ :
8.
Մեր եկեղեցին գացինք :
9. Աշակերտը դպրոց կ'երթայ :

Բ. Հետևեալ նախադասութեանց կմախքը գտիր , այսինքն՝ բո-
 չոր լրացուցիչները դուրս ձգելով , միայն պարզ ենթական և ստորո-
 գելին առ .

Օրինակ . — Այսօր մեր դպրոցի ամբողջ աշակերտ-
 ները տօնին հանդիսաւոր ցնծութենէն շատ ուրախացան :

Կմախք . — . . . աշակերտները . . . ուրախացան :

1. Մեր բարեխնամ Օգոստափառ Վեհապետը , իր
 գահակալութեան տարեգարծին առթիւ , կարգ մը բան-
 տարկեալներ ազատ արձակեց :
2. Աստուած բարի մար-
 դիկը կը վարձատրէ թէ՛ այս աշխարհի մէջ եւ թէ՛ յաւի-
 տենականութեան մէջ :

Գ. Ընթերցարանի դասիդ մէջ որոշե մակբայները , և ըսե թե ո՞ր
 պարագան կը ցուցնեն :

Հրահանգ 28

Ա. Հետևեալ նախադասութեանց մեջ կետերուն տեղ յարմար մակբայներ գտիր և դիր.

1. Ես . . . տեսայ ձեր բարեկամը : 2. Ծերունի հիւանդը . . . աղէկ է : 3. Վարդապետը . . . տուն քաշուեցաւ : 4. Այս խնձորը . . . կարմիր է : 5. Ընկերս սպասեց ինձի հետ . . . քանզի ես . . . կը վախնայի : 6. Այս տիկինը . . . կը հագուի : 7. Անիկա . . . կ'այցելէ աղքատները , եւ . . . ընծաներով կ'ուրախացնէ զանոնք :

Բ. Վերի ամբողջացուցած նախադասութիւններուդ բառազնութիւնը կատարե, բերանացի և գրաւոր:

Օրինակ. — Բերանացի Բառազննութիւն .

Ես առաւօտուն տեսայ ձեր բարեկամը :

1. Ես դերասնուն է , որովհետեւ անուան մը տեղ դրուած է :

2. Առաւօտուն մակբայ է , քանզի տեսայ բային պարագան (ժամանակ) կը ցուցնէ :

3. Տեսայ բայ է , ծանօթ պատճառաւ :

4. Ձեր նոյնպէս դերասնուն է :

5. Բարեկամը անուն է , քանզի իր մը կը ցուցնէ :

Օրինակ. — Գրաւոր Բառազննութիւն .

1. Կրօնաւոր մարդիկ միշտ ազնիւ անձեր ըլլալու են , վասն զի ամէն մարդ զանոնք կը յարգէ : 2. Իմաստուն մարդը անգամ երբեմն կրնայ սխալիլ . միայն Աստուած անսխալ է :

ԱՆՈՒՆ	ԴԵՐԱՆՈՒՆ	ԲԱՅ	ՄԱԿԲԱՅ	ԱԾԱԿԱՆ
Մարդիկ Անձեր Մարդ Մարդը Աստուած	Զանոնք	Ըլլալու են Կը յարգէ Կրնայ Սխալիչ է	Միշտ Վասն զի Անգամ Երբեմն Միայն	Կրօնաւոր Ազնիւ Ամեն Իմաստուն Անսխալ

ԴԱՍ Ի Զ

Շ Ա Ր Ա Դ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

1. Գրէ նախադասութիւն մը , որ բաղկանայ միայն երկու բառերէ , անուն և բայ :
2. Գրէ նախադասութիւն մը , որ բաղկանայ երկու բառերէ , դերանուն և բայ :
3. Գրէ երկու իրարու միացած նախադասութիւններ , որ պարունակեն երեք բառեր , անուն , դերանուն և բայ :
4. Գրէ նախադասութիւն մը , որ բաղկանայ երեք բառերէ , ածական , անուն և բայ :
5. Գրէ նախադասութիւն մը , որ բաղկանայ չորս բառերէ , ածական , անուն , բայ և մակբայ :
6. Շինէ խօսք մը , որ բաղկանայ հինգ տեսակ բառերէ , անուն , դերանուն , բայ , ածական և մակբայ :

Հրահանգ 29

Ս. Հետևեալ նախադասութեանց մեջ յարմար կետերը դիր, և բոլոր գրերը գշխագրի փոխէ, ուր որ պետք է.

Երբոր զատիկը կու գայ — տղայք ունին նոր փայ-
լուն կօշիկներ — որոնք իրենց հայրիկը շուկայէն բերած
է — կը հագնին նոր սիրուն հանդերձեղէններ — զորոնք
մայրիկը պատրաստած է — կը հագնին զանոնք ամէնքն
ալ հպարտութեամբ մը — զոր դիւրին չէ ծածկել — ազ-
գականներ եւ բարեկամներ իրարու այցելութիւն կու
տան — կը մոռնան պահ մը իրենց սովորական հոգերը
— վասն զի ժամանակ է սիրոյ եւ ներողութեան — ժա-
մանակ է նաեւ բարեգործութեան — կը յիշենք մեր աղ-
քատիկ դրացին — մեր ծանօթ հիւանդը եւ անծանօթ-
ներն ալ — որ կը տառապին կարօտ եւ անմխիթար :

Բ. Հետևեալ բառերը գործածելով վարը դրուած թերի նախա-
դասութիւնները լրացուր.

1. Ճիւ ճիւ , սիրուն , ա՛խ վա՛խ , հեռու , մինա-
կուկ , տանիքէն , մնացիր , ձմեռն , երկիր :
2. Գերի , չարածճի , որ , խղճի , կ'ապտակէ , Ար-
փինէն , տասն , չէ , ձեռքը , ամաչէ :
3. Դաշտեր , Զատիկ , հաւկիթներ , ընծայ , աշխարհ :

Ա.

Մեր . . . բունիկդ առկախ
. . . երգես թռչնիկ . . .
Եւ քու լեզուով կ'ըսես . . .
. . . եկաւ , քու ընկերներ
Թռան գացին
Դուն . . . հոս . . . :

Բ

Իր գիրգ ձեռքին եղայ . . . ,
 . . . պատանիկ մ'է համբուրի .
 Բայց այն
 Ձիս . . . առանց . . . :
 Բայց ի՛նչ , կուզէ՞ք որ . . .
 . . . դեռ . . . ամսու . . . :

Գ

Ծաղկած են . . . ծիւ ծիւ խառուտիկ ,
 եւ կոչնակ ժամուն աւետէ . . .
 . . . է եկեր եւ . . . ցնծայ ,
 Կարմիր . . . բերած է . . . :



ԴԱՍ Ի Է


ՅՕԴՈՒԱԾՈՅ ԼՐԱՑՈՒՑԻՉՆԵՐ

1. Ո՞ր բառերը կը գործածուին ենթակայի համար :

— Անուն կամ դերանուն :

2. Ո՞ր տեսակ բառերը կը գործածուին ստորագելիի համար : . . .

Դիտողութիւն. — Ասոնք կը կազմեն նախադասութեան կմախքը :



3. Ո՞ր բառերը ենթակային կամ ստորոգե-
լին լրացուցիչը կը կազմեն :
— Ածականը եւ մակբայը :

Գրէ .

Մեր տանը դուռը բացուեցաւ :

4. Ո՞ր դուռը բացուեցաւ :

— Մեր սանը :

5. Սոյն երկու բառերը միասին ո՞ր տեսակ
բառի կը համապատասխանեն :

— Ածականի :

Գրէ .

Պարտէզին կից տունը փլաւ :

6. Ո՞ր տունը փլաւ :

— Պարտէզին կից :

7. Այս երկու բառերը ի՞նչ դեր կը կատա-
րեն : . . .

Գրէ .

Գրիչս գրասեղանին տակ գլորեցաւ :

8. Ո՞ւր գլորեցաւ գրիչս :

— Գրասեղանին տակ :

9. Ի՞նչ կը ցուցնեն գրասեղանին տակ բառերը :

— Տեղ :

10. Տեղ ցուցնող բառերը սրճնք են :
— Մակբայները :

11. Ուրեմն յիշեալ երկու բառերը, գրաստ
դանինն սակ, ո՞ր բառի զօրութիւն ունին :
— Մակբայի :

Գրէ հետեւեալ երկու նախադասութիւնները

Ա. Եղբայրս ինձի չափ արագ կրնայ վազել :

Բ. Քրոջս համար սէր ունեցող աղջիկը քովս եկա :

12. Ո՞րչափ արագ : Ի՞նչ բանի սէր ունեցող : . . .

Դիտողութիւն. — Ինձի չափ և քրոջս համար
կրկին բառերը՝ արագ մակբայը և սէր ունեցող
ածականը կը լրացնեն : Ուստի մակբայի ոյժ ունին :

Դիտողութիւն. — Կը տեսնուի թէ յիշեալ կա-
պակցեալ բառերը, ածականի և մակբայի մտօք,
թէ ենթակայի և թէ ստորոգելիի լրացուցիչներ
կ'ըլլան : Այս տեսակ լրացուցիչներ յօդուածոյ
կ'ըսուին :

13. Ի՞նչ է յօդուածոյ լրացուցիչ :

— Երբ երկու բառեր միասին ածականի մը
կամ մակբայի մը իմաստը կը յայտնեն, կ'ըսուին
յօդուածոյ լրացուցիչներ :

Հրահանգ 30

Ա. Հետևեալ նախադասութեանց մեջ յօդուածոյ լրացուցիչները գծով մը միացուր, և ըսէ թէ ածականի թէ մակբայի գօրութիւն ունին.

Բ. Հետևեալ նախադասութիւնները յարմար բառերով լրացուր.

1. Մեր կեանքը ծաղկի . . . վաղանցուկ . . . : 2. Պանդուխտը ջուրի . . . կը կարօտնայ իրենները : 3. Երկանիւր . . . արագ կ'ընթանայ : 4. Սուրբերն ալ մեզի . . . կիրք . . . մարդիկ էին : 5. Պարտէզին . . . բաց է : 6. Չար հրեշտակները երկինքէն . . . թափեցան : 7. Մարթա դպրոցին . . . իմ . . . կը նստի : 8. Այս պանդուխտին . . . խանութը շատ շքեղ է : 9. Այս ծաղիկը թաղարի . . . ծլած է : 10. Կառախուժքը կամուրջին . . . անցաւ . անիկա երբեմն լեռներու . . . կ'անցնի : 11. Մեր պարտէզի . . . խամրեցան : 12. . . լոյսը պայծառ է : 13. Ճամբուն . . . մուրացող աղքատը ձիու մը ոտքին . . . կոխտուտեցաւ :

Օրինակ. — Ծառին վրայի թռչունը գլխուս վրայ ինկաւ :

Ո՞ր թռչունը. — Ծառին վրայի, ածականի ոյժ ունի :

Ո՞ւր ինկաւ. — Գլխուս վրայ, մակբայի ոյժ ունի :

1. Գործաւորը սանդուխտներէն վեր ելաւ : 2. Գրասեղանին քովի գիրքը բեր : 3. Պատին վրայի քարը փրթաւ : 4. Ճրագին մէջի իւզը սպառեցաւ : 5. Աշակերտները դպրոցին շուրջը պտտեցան : 6. Փառնուկը ոչխարին ետեւէն կը վազէ : 7. Ապուրը հագուստներուս վրայ

Թափեցաւ : 8. Ճամբուն վրայ երկու կայրեր տեսանք :
 9. Ձին մրրիկի պէս անցաւ : 10. Սմազերը կը փախչին :
 հովերուն առջեւէն : 11. Լեռներու վրայ ձիւները կը
 մնան : 12. Պահապանը տուներուն շուրջը կը դառնայ :
 13. Կամուրջին ծայրերը հոսանքէն վառատեցան : 14.
 Պատանի մը, երկանիւի վրայ հեծած, կայծակի պէս կը
 սլանար : 15. Ձեռքերը դէպ ի վեր բռնեց ու խօսեցաւ :
 16. Ընկղմող անձին ձայնը մրրիկներուն մէջէն կը
 լսուէր : 17. Ձկնորսը նաւակին մէջ ցատկեց : 18. Մենք
 ծառերուն ներքեւ կը քնանանք, եւ աղբիւրին մօտիկ
 կը նստինք : 19. Քրիստոս մեզի պէս մարդ եղաւ, բայց
 առանց մեղքի :

Գ. Վերի նախադասութեանց վերջուծման գրաւոր ձևերը շինե

Օ Ր Ի Ն Ա Կ Ա

ԲԱՂԱԴՐԵԱԼ ԵՆԹԱԿԱՅ		
Լրացուցիչ ենթակայ	Պարզ ենթակայ	Պարզ ստորոգելի
Մեր տանը	դուռը	ինկաւ

Օ Ր Ի Ն Ա Կ Բ

ԲԱՂԱԴՐԵԱԼ ԵՆԹԱԿԱՅ		ԲԱՂԱԴՐԵԱԼ ՍՏՈՐՈԳԵԼԻ	
Լրաց. ենթակայ	Պարզ ենթակայ	Լրաց. ստորոգելի	Պարզ ստորոգ.
Եղբորս գրչին	ծայրը	սենեակին մէջ	ինկաւ

Օ Ր Ի Ն Ա Կ Գ

ԲԱՂԱԴՐԵԱԼ ՍՏՈՐՈԳԵԼԻ		
Պարզ ենթակայ	Լրացուցիչ ստորագելի	Պարզ ստորագելի
Անիկա	այսօր այգիիս մեջ	կը գործէ

Օ Ր Ի Ն Ա Կ Գ

ԲԱՂԱԴՐԵԱԼ ԵՆԹԱԿԱՅ		ԲԱՂԱԴՐԵԱԼ ՍՏՈՐՈԳԵԼԻ	
Լրացուցիչ ենթակայի	Պարզ ենթ.	Լրաց. ստոր.	Պարզ ստոր.
Քրոջս համար սեր ունեցող	աղջիկը	ձեր քով	եկաւ

ԴԱՍ ԻԸ

Ո Ի Ր Ի Շ Լ Ր Ա Ց Ո Ի Ց Ի Չ Ն Ե Ր

Յ Ե Տ Ա Դ Ր Ո Ի Թ Ի Ի Ն

(Բասապուն գիրք յը դնելով գրասեղանին վրայ, համ, բռնելով գրասեղանին պակը, վեր, վար, +ովը, և այլն) .

1. Ի՞նչ յարաբերութիւն ունի այս գիրքը գրասեղանին հետ :

— Գիրքը գրասեղանին վրայ է :

2. Ի՞նչ յարաբերութիւն ունի հիմա ,
— Գրասեղանին *սակն* է :

3. Հի՞մա :
— Գրասեղանէն *վեր* է :

4. Հի՞մա :
— Գրասեղանէն *վար* է :

5. Հի՞մա :
— Գրասեղանին *ֆովն* է :

6. Ատոնց մէջ ո՞ր բառերն էին որ յարաբե-
րութիւնը կը ցուցնէին գրասեղանին հետ :

— Վրայ , *սակը* , *վեր* , *վար* , *ֆովը* :

7. Գրասեղանին վրայ , գրասեղանին *սակը*
և *այլն* , ի՞նչ տեսակ լրացուցիչ կ'անուանես :

— Յօդուածոյ լրացուցիչ :

8. Արդ , այդ յօդուածոյ լրացուցիչը որով կը
վերաբերի : Զոր օրինակ .

Գիրքս գրասեղանին վրայ դրի :

— Ասորոգելիին :

Զնչէ վրայ բառը և կարդա .

Գիրքս գրասեղանին . . . դրի :

9. Գրասեղանին լրացուցիչ եղաւ այժմ :

— Այ :

10. Ուրեմն ո՞ր բառն է որ գրասեղանը կը կցէ
դրի ստորոգելիին , և անոնց յարաբերութիւնը կը
ցուցնէ :

— Վրայ :

Գիտելիք. — Այն բառերը, որ կը կցեն անուն
և կամ դերանուն մը ուրիշ բառի մը հետ
և անոնց միջև եղած յարաբերութիւնը կը ցուց-
նեն, ֆերականութեան մէջ կը կոչուին յեւսա-
դրութիւն :

11. Ի՞նչ է յետադրութիւն :

— Յեւսադրութիւնն է այն բառը, որ կը կցէ
անուն մը ուրիշ բառի մը հետ, եւ կը ցուցնէ
անոնց միջև եղած յարաբերութիւնը :

Գրէ .

Արծիւը դէպ ի վեր կը սլանայ :

12. Ո՞րն է կցող բառը կամ յետադրու-
թիւնը այս նախադասութեան մէջ : . . .

13. Դէպ ի յետադրութիւնը բային հետ կցելի
անունին, վեր, սկիզբը թէ վերջը դրուած է : . . .

14. Յետադրութիւնները անունին (կամ, դեր-
անունին) ո՞ր ծայրը կը դրուին ընդհանրապէս : . . .

Դիտողութիւն. — Յետադրութիւնները երբեմն
անունին (կամ, դերանունին) սկիզբը կը դրուին :
Այս պարագային մէջ կրնան կոչուիլ նախադրու-
թիւն :

15. Ի՞նչ է նախադրութիւն :

— Կցող բառը երբ անունին սկիզբը դրուի,
կը կոչուի նախադրութիւն :

Հրահանգ 31

Ա. Հետագայ նախադասութեանց յետադրութիւնները և նախադրութիւնները ստորագծե, և ուրիշ գծով մը միացուր այն բառերը, որոս յետադրութիւնը իրարու հետ կը միացնէ.

Օրինակ. — Հովիւները դաշտին մէջ հօտը կ'արածեն

1. Տղայք տանը բոլորտիքը կը դառնան :
2. Ժողովուրդը դէպ ի եկեղեցի կը յառաջանայ :
3. Հովանուտ ծառին ներքեւ կը նստիմ :
4. Դասատուն եկաւ աշակերտներուն հետ մէկտեղ :
5. Կատուն ու ձագը իրարու հետ կը խաղան :
6. Մեր տունը լերան ստորոտը շինուած է :
7. Մեր դպրոցը ձերինին պէս բարձր չէնք մըն է :
8. Շնչասպառ վազեց մինչեւ տուն հասաւ :
9. Անիկա իբր աղքատ ապրեցաւ :
10. Լաւ է կոյր աչքով քան կոյր մտքով :
11. Ամէն մարդ պատասխանատու է օրէնքին , բաց ի թագաւորէն :
12. Առանց գործքի հաւատքը մեռած է :

Բ. Վերի նախադասութեանց մէկ քանին բերանացի վերլուծե

Օրինակ Ա. — Խեղճ գործաւոր մը պատին վրայէն մինչեւ վար ինկաւ :

1. Գործաւոր . — Պարզ եւնթակայ :
2. Խեղճ , մը . — Ածական շրացուցիչ եւնթակայի :
3. Ինկաւ . — Պարզ ստորոգելի :
4. Պատին վրայէն , մինչեւ վար (քանզի իբրև յօդուածոյ լրացուցիչ մակբայի զօրութիւն ունի) . — Մակբայ շրացուցիչ :

ԳՐԱԻՈՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ

ԲԱՂԱԴՐԵԱԼ ԵՆԹԱԿԱՅ			ԲԱՂԱԴՐԵԱԼ ՍՏՈՐՈԳԵԼԻ		
Լրաց. ենթ.	Պարզ ենթ.	Լ. Ե.	Մակբայ լրաց. ստորագելի		Պարզ ստ.
Խեղճ	գործաւոր	մը	պատին վրայէն	մինչև վար	ինկաւ

Օրինակ Բ. — Խեղճ հիւանդ տղան անհնարին տազնապներու մէջ մեռաւ :

1. Տղան . — Պարզ ենթակայ :

2. Խեղճ հիւանդ . — Ածական լրացուցիչ ենթակայի :

3. Խեղճ հիւանդ տղան . — Բաղադրեալ ենթակայ :

4. Մեռաւ . — Պարզ ստորագելի :

5. Անհնարին . — Ածական լրացուցիչ տազնապներուն :

6. Տազնապներու մէջ . — Մակբայ լրացուցիչ ստորագելիի (քանզի ուր կամ ինչպէս մակբայի ոյժ ունի, իբր յօդուածոյ լրացուցիչ) :

7. Անհնարին տազնապներու մէջ մեռաւ . — Բաղադրեալ ստորագելիի :

ԳՐԱԽՈՐ ՎԵՐԱՌԻՇՈՒԹԻՒՆ

ԲԱՂԱԴՐԵԱԼ ԵՆԹԱԿԱՅ		ԲԱՂԱԴՐԵԱԼ ՍՏՈՐՈԳԵԼԻ	
Բաղ. լր. եմբ.	Պարզ եմբ.	Բաղադ. լրացուցիչ ստորոգելիի	Պարզ ստ.
Խեղճ հիւանդ	տղան	անհնարին տազնապներու մէջ	մեռաւ

Գ. Նոյն նախադասութեանց բառազնուրիւնը ըրէ, բերանացի և գրաւոր:

Բերանացի Բառազնուրիւն

Խեղճ հիւանդ տղան անհնարին տազնապներու մէջ մեռաւ :

(Միւս բառերը ըստ նախընթաց օրինակներուն)

Տազնապներու մէջ. — Յօդուածոյ մակբայ :
 Մէջ. — Բառ մըն է, որ կը միացնէ տազնապներու անունը մեռաւ բային հետ, և կը ցուցնէ յարաբերութիւնը անոնց միջև : Ուստի մէջ յեւսադրութիւնն է, և այլն :

Գրաւոր Բառազնուրիւն

Այն աչակերտը, որ բնաւ դպրոցէն դուրս չելեր, անոր կը հաւենիմ :

ԱՆՈՒՆ	ԴԵՐԱՆՈՒՆ	ԲԱՅ	ՄԱԿԲԱՅ	ԱՅԱԿԱՆ	ՅԵՏԱԴՐՈՒԹԻՒՆ
Աշակերտը Գպրոցէն	Որ Անոր	Չեղեր Կը հաւնիմ	Բնաւ	Այն	Գուրս

Գ. Ընթերցարանի դասիդ մէջ յօդուածոյ լրացուցիչներ գտիր, և յետադրութիւնները ու նախադրութիւնները որոշէ:

ԴԱՍ ԻԹ

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՇԱՐՄԴՐՈՒԹԵԱՆ

Իր մը նկարագրէ հետեւեալ հարցումներուն պատասխանելով.

1. Ի՞նչ յատկութիւն ունի :
2. Ի՞նչ բանէ կը շինուի :
3. Ո՞ւր կը գտնուի :

Օրինակ. — Փղոսկր :

1. Փղոսկրը կարծր է եւ ճերմակ գոյն ունի :
2. Կ'առնուի փիղերու ժանիքէն :
3. Կը գտնուի Ասիոյ եւ Ափրիկէի մէջ :

Միացուր •

Փղոսկրը , որ կարծր եւ ճերմակ է , կ'առնուի փեղերու ժանիքէն , ու կը գտնուի Ասիոյ եւ Ափրիկէի մէջ .

Նոյն կերպով շինէ հետեւեալ բառերը •

1. Ածուխ : 2. Ոսկի : 3. Կաթ : 4. Գինի :



ԳԱՍ Լ

ԲԱՌԵՐՈՒ ԵՒ ՆԱԽԱԳԱՍՈՒԹԵԱՆՑ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆ

Շ Ա Ղ Կ Ա Պ

Գրէ •

Սրբուհի կրնայ երգել :

1. Ուրիշ ո՞վ կրնայ երգել :

— Լուսնթագ կրնայ երգել :

2. Այս երկու նախադասութիւնները կրնան միացնել :

— Սրբուհի կրնայ երգել եւ Լուսնթագ կրնայ երգել :

3. Յիշեալ նախադասութիւնը ի՞նչպէս կ'ըսենք սովորաբար :

— Ա. Սրբունի եւ Լուսնթագ կրնան երգել (¹) :

4. Երկու ձևերուն մէջ ալ ի՞նչ աւելցնելով
կապեցիր : . . .

Գրէ .

Բ. Հայրս կարդաց եւ մայրս մտիկ ըրաւ :

5. Այս խօսքը քանի՞ նախադասութիւն կը
պարունակէ , և ինչո՞վ կապուած են անոնք : . . .

6. Ա. նախադասութեան մէջ եւ բառը ի՞նչ
բան կապած է ըստ երևութին :

— Երկու բառեր :

7. Բ. նախադասութեան մէջ եւր ի՞նչ կա-
պած է :

— Երկու նախադասութիւններ :

Գիտելիք. — Այս կարգի բառերը , որ նախա-
դասութիւններ կամ բառեր իրարու հետ կը կա-
պեն , կրնան կոչուիլ կապող բառեր , որոնք Քե-
րականութեան մէջ շաղկապ կը կոչուին :

8. Ի՞նչ է շաղկապ :

— Կապող բառերը կ'ըսուին շաղկապ :

9. Սա նախադասութեան շաղկապը վերցնե-
լով , երկու նախադասութիւն կազմէ .

Հայրս ու քոյրս հիւանդ են : . . .

(¹) Ասկէ կը տեսնուի թէ կցող բառերը (շաղկապ) իսկապէս զեղ-
չեաց , կամ , յայտնի տրուած , նախադասութիւններ կը կապեն : Սակայն
առաջին պարագային սովորաբար կ'ըսենք՝ բառեր կը կապեն : Դասատուն
օրինակներով թող բացատրէ զայն :

Հրահանգ 32

Ա. Հետևեալ նախադասութեանց մեջ շաղկապները նշանակելու և ըսելիք նախադասութիւններ կցած են թէ բառեր, և ինչ տեսակ բառեր.

Օրինակ Ա. — Երէկ անձրեւ եկաւ, ուստի ժամ չի գացի :

Ուստի. — Շաղկապ (քանզի միացուցած է երկու նախադասութիւններ) :

Օրինակ Բ. — Տղան եւ աղջիկը եկան :

Եւ. — Շաղկապ (քանզի կապած է երկու անուններ) :

1. Ան կը սիրէ զիս, ու ես զանիկա կը յարգեմ :
2. Հպարտ թէպէտ գեղեցիկ դէմք մը ունէր :
3. Անոնք խնձոր ունին, իսկ մենք՝ խաղող :
4. Աղքատ բայց համեստ ծնողք մը ունիս :
5. Աղջիկը դպրոց չի գնաց, քանզի հիւանդ էր :
6. Ես ու ինք միասին գացինք :
7. Գէորգ գնաց իմ քովէս եւ քու քովէդ :
8. Գէորգ եւ ես խաղացինք :
9. Հայրը ու մայրը աղքատ են :
10. Թռչունը կը թռչի ու կ'երգէ :
11. Վարժապետը ազդու՝ բայց մեղմ կարդաց :
12. Դուք հրամայեցէք որ (որպէս զի) ես նամակը գրեմ :
13. Այսօր կամ վաղը վկայական կ'առնեմ :
14. Ոտքիդ ցաւը անցաւ, եւ տակաւին կու լաս :

Բ. Հետևեալ նախադասութեանց մեջ կետերուն տեղ յարմար շաղկապներ դիր.

1. Տարօրինակ կը կարդայ . . . փոքր է :
2. Խաչատուր նստաւ . . . անիկա գործը աւարտեց :
3. Յակոբ . . . ես դասընկեր ենք :
4. Պարտէզը միայն հա-

ճելի չէ, . . . օգտակար է : 5. Հայրը մեռաւ . . . սղա-
 ըոր է : 6. Դասս այնքան դիւրին է . . . ջանք չուզեր :
 7. Կը քնանամ . . . յոգնած եմ : 8. Եղբայրս կը կան-
 չեմ . . . պատասխան ընդունիմ :

Գ. Շաղկապով կապուած բառերը նախադասութիւններու
 փոխէ :

Դ. Նոյն վարժութիւնները ըրէ ընթերցարանի դասիդ մէջ :



ԴԱՍ ԼԱ

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ

Աշակերտները գրաւոր պատասխանեն հետեւ-
 եալ հարցումներուն՝ պայմանաւ որ նախադասու-
 թիւնները թերի չըլլան .

Օրինակ

Հարցո՞՞ւմ . — Դիւրութեան համար բառերը ի՞նչ ը-
 րած են :

Պատասխան . — Դիւրութեան համար բառերը քանի
 մը կարգերու բաժնած են :

1. Իրերը ի՞նչպէս կը ճանչնանք : . . .

2. Ամէն իր զգայարանքով կ'իմացուի՞ : . . .

3. Ո՞ր տեսակ բառ կրնայ լրացուցիչ ըլլալ ենթակայի և ստորոգելիի : . . .

4. Մակբայը ենթակայի լրացուցիչ կրնայ ըլլալ : . . .

5. Սա նախադասութեան շաղկապը վերցնելով երկու նախադասութիւն կազմէ .

Հայրս եւ քոյրս հիւանդ են : . . .

6. Մինչև հիմա քանի՞ տեսակ բառ սորվեցար : Կարգաւ գրէ : . . .

Հրահանգ 33

Հետևեալ բառերը իրենց պատշաճ տեղերը դնելով, ստորև գրուած ոտանաւորներուն թերի տողերը լրացուր .

Ա. Մայրիկն , քնքոյշ , մօր , թռչիւ , կը ննջեն , ուսած չեն , բոյն , երանութիւն , կը ննջես , տակ :

Բ. Քնարիկ , առտու , քանարիկս , թռչնոյն , կ'ըսէր , տղու , կանգ առ , զրկանք , անուշիկ , խուշիկս , թող չես տար , խուշիկի պէս , անդադար :

Ա.

Մինչ կը հսկէ . . . զգոյշ
Իւր ձագուկներ ճճուին . . .
. . . թեւոց տակ ապա . . .
Որոնք . . . դեռ . . . :

Մանկիկ, դու եւս ունիս մի . . .
Ուր վայելես . . .
Հոն . . . իբրեւ հրեշտակ
Քու սիրելի մօր թեւոց . . . :

Բ

Աստուծոյ մատամբ լարուած . . .
Մինչ վանդակին մէջ կ'երգէր . . .
Մայրն ալ Պետիկին իրիկուն . . .
Կ'ըսէր. «Իմ թռչնիկ . . . ես դու :»
Սակայն երբ լսուէր . . . երգն ազու ,
Չէր հանդուրժեր որ ձայն ելլէ . . .
Եւ սաստէր. «Լուէ, Պետիկ . . . կանգ :»
Այս բան Պետիկին թուելով . . .
Անցեալ օր շեշտով մ'անմեղ . . .
Հարցուց. «Ես ի՞նչդ եմ, մայրիկ :» «Իմ . . . :»
«Եթէ խուշիկդ եմ, ինչո՞ւ . . .
Որ . . . խօսիմ . . . :»

Ա.

ԴԱՍ ԼԲ

Մ Ի ԶԱՐ Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Գրէ .

Ա. Աւա՛ղ, տղան պատուհանէն վար ինկաւ :
Բ. Ա՛խ, ե՞րբ դասս աղէկ պիտի սորվիմ :
Գ. Օ՛հ, Զատիկը նորէն մօտեցաւ :

1. Առաջի բառը ի՞նչ կը ցուցնէ հոս :

— Ցաւի զգացում կը ցուցնէ :

2. Ի՞նչ կը ցուցնէ ա՛խ :

— Փափաք կը ցուցնէ :

3. Ի՞նչ կը ցուցնէ օ՛հ :

— Ուրախութեան զգացում կը ցուցնէ :

Գիտելիք. — Այս կարգի բառերը, որ զօրաւոր
և յանկարծական զգացում կը յայտնեն, կրնան
կոչուիլ զգացում ցուցնող բառեր : Քերականու-
թեան մէջ զգացում ցուցնող բառերը միջարկու-
թիւն կոչած են :

4. Ի՞նչ է միջարկութիւն :

— Միջարկութիւն կ'ըսուին զգացում ցուց-
նող բառերը :

Գիտելիք Ա. — Այս դասակարգին վերաբերող
բառերը նախադասութեան մէկ մասը չեն կազ-
մեր, քանզի անոնք ուրիշ բառերու հետ միանա-
լով, նախադասութիւնը ամբողջացնելու չեն ծա-
ռայեր, այլ յանկարծական յուզում մը յայտնե-
լու համար խօսքին մէջ կը ձգուին, ինչպէս կը
նշանակէ անունը (միջարկութիւն) : Ասոր համար է
որ միշտ ստորակէտերով կը բաժնուին :

Գիտելիք Բ. — Միջարկութեանց վրայ կը դրուի
նշան (՛) մը, որ երկար կը կոչուի :

Հրահանգ 34

Հետևեալ նախադասութեանց մեջ միջարկութիւնները նշանակե, և ըստ թե ինչ տեսակ զգացում կը ցուցնեն.

1. Ի՛նչ, դու՛ն իմ բարեկա՛մս ես :
2. Երանի՛ քեզի որ մաքուր եւ ուրախ սիրտ մը ունիս :
3. Բայց, աւա՛ղ, այժմ պզտիկ քոյրս կը հանգչի ցուրտ հողին տակ :
4. Շատ անգամ խրատեցի աղջիկս, այլ, աւա՛ղ, վերջապէս պատիժը կրեց :
5. Մայրս, ո՛հ, ե՞րբ պիտի հոս հասնի :
6. Վա՛յ քեզ, կեղծաւոր աղջիկ :
7. Բէ՛հ, ո՞վ կը վախնայ մութէն :
8. Տեսայ զինքը, ափսո՛ս, շատ հիւանդ էր :
9. Վա՛շ, որ տաճարը կը քակէիր :
10. Վարժապետիդ անհնազանդ եղար, ո՛խ, հիմա պատժուէ :
11. Վա՛խ, վերջապէս մայրը մեռաւ :

ԴԱՍ ԼԳ

Հ Ա Ն Դ Է Ս

Ա. Բառերուն դասակարգը .

1. Իր ցուցնող բառեր (Անուն) . — Տուն, մայր, կաթ, և այլն :

2. Անունի տեղ դրուող բառեր (Դերանուն) . — Ես, դու, մենք, և այլն :

3. Բան մը ըսող բառեր (Բայ) . — Կը կարգամ, կը գրեմ, կը խաղամ, և այլն :

4. Պարագայ ցուցնող բառեր (Մակրայ) . — Հոս, հիմա, շուտ, և այլն :

5. Յասկուքիւն ցուցնող բառեր (Ածական).
— Բարի, մեծ, նոր, և այլն :

6. Յարաբերութիւն ցուցնող բառեր (Յեսա-
դրութիւն). — Վրայ, տակ, մէջ, և այլն :

7. Կապող բառեր (Շաղկապ). — Եւ, ու,
քանզի, և այլն :

8. Զգացում ցուցնող բառեր (Միջարկու-
թիւն). — Աւաղ, ոհ, էհ, և այլն :

Վերը նշանակուած ուրի տեսակ բառերը ընդ-
հանուր անունով կը կոչուին Մասունի Բանի, որ
կը նշանակէ խօսքի կտրուներ :

Բ. Բառերուն պաշտօնը նախադասութեան մէջ.
Անուն } Ա. Ենթակայ. — 1. Գիրքը հինցաւ : 2.
Դերանուն } Անունի խաղացին :

Անուն } Բ. Լրացոցել ենթակայի. — 1. Պատիւն քարը
Դերանուն } ինկաւ : 2. Անոր ծառը չորցաւ :
Գ. Լրացոցել «որո՞՞ք էլքէ». — 1. Կարդացի
այն գիրքը : 2. Գրիչը անոր տուաւ :

Բայ. — Սորո՞՞ք էլքէ. — Ճրագը վարեցաւ :

Մակբայ. — Լրացոցել «որո՞՞ք էլքէ». — Շուտ վազեց :

Ածական. — Լրացուցիչ անուններու, նախադա-
սութեան ու է մասին մէջ, ենթակա-
յին կամ ստորոգելիին : — 1. Ենթա-
կայի մասին մէջ. Գեղեցիկ ձայն
լուեցաւ : 2. Ստորոգելի մասին մէջ.
Անիկա գեղեցիկ ձայնով կ'երգէր :

Յեճադրութիւն . — Անունի կամ դերանունի մը հետ միացած իբր յօդուածոյ ար-
ցունել «արդէն» . — Քոյրս ինծի հետ
կ'երթար :

Շաղկապ . — Կը ծառայէ իբր կապ միացնե-
լով . — 1. Բառեր . ես ու Յակոբ
բարեկամ ենք : 2. Նախադասու-
թիւններ . Արեւը ծագեցաւ եւ օդը
տաքցաւ :

Միջարկութիւն . — :

Հրահանգ 35

Ա. Ստորև տրուած օրինակին պէս գծեր քաշէ, և հետևեալ
նախադասութիւնները կազմող մասունք բանիներուն իւրաքանչիւրը
իբր կարգին մէջ գրէ .

Օրինակ

Փոքրիկ տղան աներկիւղ կամուրջէն վար ցատքեց ,
եւ , աւա՛ղ , իր մէկ ոտքը կոտրեցաւ :

ԱՆՈՒՆ	ԴԵՐ- ԱՆՈՒՆ	ԲԱՅ	ՄԱԿԲԱՅ	ԱՄԱԿԱՆ	ՅԵՏԱ- ԴՐՈՒ- ԹԻՒՆ	ՇԱՂ- ԿԱՊ	ՄԻՋԱՐ- ԿՈՒԹԻՒՆ
Տղան Կամուրջէն Ոտքը	Իր	Ցատքեց Կոտրեցաւ	Աներկիւղ	Փոքրիկ Մէկ	վար	եւ	Աւա՛ղ

1. Սիրուն թռչունները ո՛րչափ անուշ կ'երգեն անտառին մէջ : 2. Կապոյտ աչքերով, գանգուր մազերով տղայ մը տեսայ որ կու լար, քանզի ձեռքէն ինկած էր մեծ խաղալիկ մը եւ կոտրած էր : 3. Այսօր հայրս մեզ համար գնեց սեւ աղուոր ձի մը, որ կարծես թռչունի պէս կը թռչի՝ երբ կը վազէ : 4. Աշխատասէր մեզուն քանի՛ աշխուժիւ հիւթ կը քամէ ամէն բացուած ծաղիկէ եւ ձմեռուան համար մեզր կը շինէ փեթակին մէջ : 5. Կապիկը կ'ուտէ ընկոյզ եւ կաղին, եւ յաճախ յոյժ զուարճալի խաղեր կ'ընէ :

Բ. Հետագայ օրինակին պէս կազմե նախադասութիւններ, որ սկսելով անուռնեւ եւ բայեւ, հետզհետե պարունակեն ուրբ մասունք բանի :

Օրինակ

1. Տղայք կը գրեն . — Անուն եւ բայ :
2. Ուշիմ տղայք կը գրեն . — Ածական մը աւելցած :
3. Ուշիմ տղայք կը գրեն խնամով . — Մակբայ մը աւելցած :
4. Ուշիմ տղայք կը գրեն խնամով եւ կը սորվին . — Շաղկապ մը աւելցած :
5. Ուշիմ տղայք կը գրեն խնամով եւ անոնք կը սորվին . — Դերանուն մը աւելցած :
6. Ուշիմ տղայք խնամով կը գրեն դպրոցին մէջ եւ անոնք կը սորվին . — Յետադրութիւն մը աւելցած :

7. Ուշիմ տղայք խնամով կը գրեն դպրոցին
ձեջ, և օհ, ի՞նչ շուտով անոնք կը սորվին. —
Միջարկութիւն աւելցած :

Ա. Թռչունները կը թռչին :

Բ. Ձին կը վազէ :

Գ. Յակոբ կ'երգէ :

ԴԱՍ ԼԳ

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ ՈՒԹԸ ՄԱՍՈՒՆՔ ԲԱՆԻՆԵՐՈՒ

1. Անուն կը ցուցնէ իր մը :

2. Բայ ” ընդհանրապէս գործողութիւն մը :

3. Դերանուն ” անուն մը, որուն դերը կը կատարէ :

4. Ածական ” յասկութիւն :

5. Մակբայ ” բային մէկ պարագան :

6. Յեսադութիւն ” յարաբերութիւն :

7. Շաղկապ ” կապակցութիւն :

8. Միջարկութիւն ” զգացում կամ յուզում :

ԴԱՍ ԼԵ

ՀԱՆԴԷՍ ՀՐԱՀԱՆԳՆԵՐՈՒ

Ա. Հետևեալ հատուածին գրաւոր բառագննութիւնը կատարէ 60րդ էջին վրայ գծուած ցուցակին պէս.

Ծ Ի Ծ Ա Ղ

Շատ տարբեր տեսակ ծիծաղներ կան : Կայ յիմարներու ծիծաղ, որ պաղ եւ անախորժ բան է : Կայ յաղթանակի ծիծաղ, եւ ծաղրի տգեղ ծիծաղը :

Պրուսեցի հետաքրքիր անձ մը, որ ծիծաղը ուսումնասիրած է, կ'ըսէ թէ այնչափ տեսակ ծիծաղներ կան՝ որչափ ձայնաւոր գրեր կան. եւ ամէն մէկ ծիծաղ ձայնաւորներէն մէկուն կը վերաբերի : Կ'ըսէ այս հեղինակը. Անոնք որ Աով կը ծիծաղին, համարձակ եւ ազատ կը ծիծաղին : Էով ծիծաղը մեղամաղձոտներուն յատուկ է : Ի ձայնաւորը այն կարգի մարդոց ծիծաղն է, որ ծառայական եւ անհաստատ մտքի տէր են : Օով ծիծաղը կը ցուցնէ առատաձեռնութիւն եւ քաջութիւն : Ժանտախտէ փախչելու պէս փախիր այնպիսիներէ որ ՈՒով կը ծիծաղին : Կծծի եւ կեղծաւոր մարդոց ծիծաղն է այդ : Այսպէս խնդացող մէկը կոպիտ եւ անկիրթ է :

Ի՞նչպէս կը ծիծաղիս .

Հա, հա, հա^o, թէ

Հե, հե, հե', թէ

Հի, հի, հի', թէ

Հօ, հօ, հօ', թէ

Հոռ, հոռ, հոռ :

Բ. Գրաւոր վերլուծե վերև դրուած կտորին այն մասերը, որ շեղագրով գրուած են:

Կանոն. — Նախադասութիւն մը վերլուծելու համար բաժնէ՛ զայն իր երկու մասերուն, ենթակային եւ ստորոգելիին, ուղղահայեաց գծով մը: Յետոյ պարզ ենթական եւ ստորոգելի ենթագծէ՛ իրենց լրացուցիչներէն որոշելու համար:

Օրինակ Ա. — Էով ծիծաղը | մեղամաղձոտներուն
յատուկ է:

Օրինակ Բ. — Օով ծիծաղը | կը ցուցնէ քաջութիւն:

ԴԱՍ ԼԶ

Հ Ա Ն Դ Է Ս Շ Ա Ր Ա Դ Ր Ո Ի Թ Ե Ա Ն Յ

Ա. Հետևեալ ամենակարճ նախադասութիւնը ընդարձակե որչափ կրնաս (էջ 62).

Ցորենը կը բուսնի:

Բ. Նախադասութիւն մը գրե, որուն մեջ, բաց ի անունե (կամ դերանունե) և բայե, գտնուի ածական մը:

Գ. Նախադասութիւն մը գրե, որուն մեջ գտնուի մակբայ մը:

Դ. Նախադասութիւն մը գրե, յետադրութիւն մը գործածելով:

Ե. Մեկ կամ երկու նախադասութիւններ գրե, շաղկապ մը գործածելով:

Զ. Նախադասութիւն մը գրե, որուն մէջ յարմար միջարկութիւն մը գտնուի:

Է. Գրե խօսք մը, մեկ կամ աւելի նախադասութիւններէ կազմուած, որուն մէջ ուրիշ տեսակ բառերն ալ գտնուին:

Ը. Նկարագրե համառօտիւ ձեր պարտեզին մեկ ծառը, ձեր տանը կատուն կամ շունը:

Թ. Երկու նախադասութիւններ կազմե, և գանոնք իրարու հետ միացուր:

Ժ. Գրե ինչ որ գիտես բնական գիւղիդ կամ քաղաքիդ վրայ:

ԺԱ. Գրի առ պատմութիւն մը գոր լսած ես:

ԺԲ. Տրուած բառերը ստորև դրուած թերի նախադասութեանց մէջ գործածե, ըստ յարմարութեան.

Ախորժահամ, մազոտ, շագանակը, մարդիկ, խոժու, մեղմ եւ ազնիւ, չէնքը, սանդուղէն, ցնցոտիներ հագած, խիտտ, հիւանդանոց, աղուոր, քարտուղարը, մէկ ոսկի, փոխանակագիր, դրսուանց, քաղցր, ներսիդին:

Կան . . . պտուղներ որ . . . կեղեւ ունին: . . . կ'աճի փշոտ կեղեւի մէջ: Կան ալ . . . որ դրսուանց . . . կ'երեւնան, բայց ներսուանց . . . են:

Հիւանդանոց մը կար, որուն . . . հին էր: Օր մը այս չէնքին խարխուլ . . . վեր ելաւ . . . եւ խոժուադէմ ծերուկ մարդ մը, եւ հարցուց . . . ճայնով մը թէ տղայոց . . . էր այդ տեղը, եւ թէ չէի՞ն ուզեր . . . հիւանդանոց մը ունենալ: . . . որ մարդէն . . . անգամ չէր սպասեր, 1,000 ոսկինոց . . . մը ընդունեց անկէ:

Շատեր . . . չեն ցուցներ թէ իրենց . . . իրապէս ի՞նչ . . . սիրտ կը կրեն:

ԺԳ. Տրուած բառերով հետևեալ ոտանաւորին յանգերը շինե (1).

Եկուր, գեղազանգուր, թող տուր, ամուր, թնջուկ,
աչուկ, սէզներ, մազեր, մազ, հեղանազ, մունաս,
Մաննաս, գեղանի, ուռենի, պաչիկ, աղջիկ :

Իմ անուշիկ Մաննիկս . . .

Սանտրեմ մազերդ . . .

Նստէ խելօք առջիս . . .

Ձէ՛, չեմ սանտրեր ամուր . . . :

Աղուոր մազերդ եղեր . . .

Թափեր ծածկեր են քո . . . :

Իրախտներու քնքոյչ . . .

Հուրիներու հրեղէն . . . :

Սանտրեմ, սանտրեմ սամոյր այս . . .

Պսակ գլխուդ այդ . . .

Վա՛խ, ցաւեցա՞ւ. մեծնաս . . .

Ձեմ ցաւցներ ալ, չէ՛ . . . :

Սիրամարդ մ'է սա . . .

Կամ վարսագեղ նուրբ . . . :

Ալ լմնցաւ, տուր մէկ . . .

Քեզ պէս ուրիշ չի կայ . . . :

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

(1) Ոտանաւորներու իւրաքանչիւր տողին վերջին վանկը յանգ կը կոչուի, որ սովորաբար նման կ'ըլլայ ուրիշ տողի մը՝ մի եւ նոյն տունին մէջ: Ձոր օրինակ.

Ու նուրբ, խարտեաշ յօնքերուն ճակ
Խայտ աչքերը թուխ կապու - ճակ:

ԺԴ. Նոյնպէս գործածէ հետևեալ բառերը յաջորդ ոտանաւորին մեջ.

Գարնանային, թել, գոգաւոր, սիրուն, կապուտակ, խղճի, կը ժպտի, ամաչէ :

Ա Ր Փ Ի Ն Է

Արդեօք շուշա՞ն . . .

Թէ պատկերն է լուսնկային .

Հո՞վ թէ մետաքս է մազին . . .

Ես չեմ կրնար զանազանել :

Իր բերանը քնքոյշ, կլոր ,

Մաղկի բաժակ մ'է . . .

Երբ նա ձայնը ձգած . . .

Կը սկսի շարքն իր երգերուն :

Ու նուրբ, խարտեաչ յօնքերուն տակ

Ոայտ աչքերը թուխ . . .

Բայց այն ձեռքը չարածճի

Զիս կ'ապտակէ առանց . . . :


Մերկ սրունգն ինձ ցոյց տայ լկտի ,

Ես կը սաստեմ, ան . . .

Բայց, ի՞նչ, կ'ուզէ՞ք որ . . .

Արփինէն դեռ տասն ամսու չէ :

Մ. ԱՃԷՄԵԱՆ



ԳԱՍ ԼԷ

Վ Ե Ր Ա Ք Ա Ղ

Ա. Հետևեալ նախադասութեանց մեջ կետերուն տեղ դիր յարմար անուններ կամ ենթականեր.

1. . . . գիշեր ժամանակ կը փայլին : 2. Գետերուն . . . անուշ է : 3. . . . առաջին մարդն է , իսկ . . . առաջին կինը : 4. . . . ամէն տեղ ներկայ է : 5. Առանց փուշի . . . չի կայ : 6. . . . Թուրքիոյ մայրաքաղաքն է : 7. . . . կը ծնանին , կ'ապրին ու կը մեռնին : 8. . . . եան Հայոց մեծ գրագէտը եւ . . . եան Հայոց անուանի բանաստեղծն է : 9. . . . Հայոց գրերը հնարեց : 10. . . . եւ . . . Աստուածաշունչը Հայերէնի թարգմանեցին : 11. Մութ . . . արեգակը ու երկնից կապոյտը կը ծածկեն : 12. Սաստիկ . . . ջուրը կը սառեցնէ , իսկ սաստիկ . . . սառը շոգիի կը փոխէ : 13. . . . մարդոց եւ բոլոր բուսական աշխարհին կեանք կու տայ : 14. . . . եւ . . . ծովուն յատակէն կը հանուին , իսկ . . . եւ . . . եւ այլն , երկրի խորերէն : 15. . . . Աստուծոյ տունն է : 16. Ոչխարին . . . կը կոչուի գառնուկ , այծին . . . կը կոչուի ուլ , առիւծին . . . կը կոչուի . . . իշուն . . . կը կոչուի . . . կովին . . . կը կոչուի . . . շանը . . . կը կոչուի . . . : 17. Գետնի տակ բացուած . . . ուսկէ կառախումբը կ'անցնի , կը կոչուի . . . : 18. Հայերէն . . . կը սորվեցնէ մեր լեզուն ուղիղ խօսիլ : 19. Ամպերէն . . . կը կաթին եւ կը բեղմնաւորեն . . . որ մեզի կու տան . . . : 20. Զմեռը . . . կը տեղայ եւ կը ծածկէ . . . որպէս թէ սպիտակ . . . ով մը :

Բ. Հետևեալ նախադասութեանց մեջ կետերուն տեղ դիր բայեր կամ նախադասութեան պարզ ստորոգելիները և, ըստ յարմարութեան, բաղադրեալ ստորոգելիները.

1. Ովկիանոսները շատ . . . եւ . . . :
2. Կապարը ծանր . . . :
3. Ծովերուն ջուրը . . . :
4. Լեզուին բոլոր բառերը ութը տեսակի . . . :
5. Մեր խորհուրդները . . . ձայնով լեզուի միջոցով :
6. Իրերը . . . զգայարանքով կամ անոնց վրայ խորհելով :
7. Յետադրութիւնը անուն մը (կամ դերանուն մը) . . . բային կամ ուրիշ բառի մը :
8. Միջարկութիւնը . . . խօսքի կազմութեան մէջ դեր մը քի . . . :
9. Մըջիւնները ժրութեամբ . . . :
10. Մեղունները ծաղիկներուն հիւթը . . . եւ փեթակին մէջ . . . մեղր :
11. Սարդերը իրենց շինած լարերով . . . ճանճեր, եւ այլն :
12. Զուկերը ջուրին մէջ . . . :
13. Օձերը խայթոց . . . որոնցմով . . . ու . . . մարդիկը :
14. Եգիպտական բուրգերը շատ . . . :
15. Սփինքսը . . . հրէշ մըն . . . որ . . . մարդու գլուխ եւ առիւծի մարմին :
16. Միքրոպները պատճառ . . . ասիտերու եւ հիւանդութեանց :
17. Թռչունները ծառերու մէջէն . . . :
18. Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայոց ազգը . . . :
19. Աշնան հովերը ծառերու տերեւները . . . :
20. Ծիծեռնիկները բարձրէն . . . եւ իրենց ճլվուկներով մեզ . . . :

Գ. Հետևեալ նախադասութեանց մեջ գործածե մակբայներ.

Օր մը վարժապետ մը ըսաւ իր աշակերտներուն . . . «Ով որ . . . ինծի բերէ ամենէն պայծառ բանը, իրեն պիտի տամ այս հրեշտակը,» ցոյց տալով սիրուն, ճերմակ հրեշտակի մը փոքրիկ արձանը :

Հետևեալ . . . տղաքը վարժապետին շուրջը ժողովուեցան իրենց բերածները ցուցնելու : Մէկը փայլուն

քարեր բերած էր : Մէկը կտոր մը արծաթ . . . փայլեցուցած էր որ հայելիի կը նմանէր : Մէկը բերած էր ապակի մը . . . սրբուած ու մաքրուած : Ուրիշ մը կուրծքի գնդասեղ մը բերած էր որ . . . արեւին մէջ . . . կը շողշողար : «Բայց . . . է փոքրիկ Արսէն,» ըսաւ վարժապետը, աչքը . . . պտտցնելով, «անիկա . . . չէ, պէտք է սպասենք . . . Արսէն ալ գայ :»

. . . փոքրիկ Արսէն վազելով . . . մտաւ, ձեռքը ձիւնի պէս ձերմակ աղաւնի մը . . . բռնած էր եւ . . . կերպով իր պարանոցին դրած : Աղաւնիին կուրծքին վրայ տեսնուած արիւնի կաթիլները կը ցուցնէին թէ վէրք ընդունած էր թռչունը : «Ո՛հ, վարժապետ,» . . . աղաղակեց Արսէն, «. . . պայծառ բան մը կը փնտռէի եւ . . . այս խեղճ աղաւնիին հանդիպեցայ : Քանի մը շարտղաք քար կը նետէին անոր, եւ ես . . . բռնեցի զանիկա եւ . . . վազեցի : Ո՛հ . . . կը վախնամ թէ պիտի մեռնի :»

. . . Արսէն կը խօսէր, աղաւնիին խփեց իր փափուկ աչքերը եւ . . . փարեցաւ Արսէնի պարանոցին . . . դրաւ իր փոքրիկ սիրուն գլուխը, եւ մեռաւ : Արսէն ծունկի եկաւ . . . եւ իր աչքերէն աղաւնիին կտորած թեւին վրայ . . . ինկան արցունքի երկու կաթիլներ խոշոր եւ պայծառ :

Վարժապետը անոր ձեռքէն առաւ մեռած թռչունը եւ . . . դրաւ իր գրասեղանին վրայ : . . . աչակերտներուն դառնալով ըսաւ . «Տղաք, երկրիս վրայ գթութեան փափուկ զգացումով թափուած արցունքէն . . . պայծառ բան չի կայ :»

«Ձերմակ հրեշտակը փոքրիկ Արսէնի տուէք,» գոչեցին տղաքը :

Գ. Յարմար յետադրութիւններ և շաղկապներ գործածե, պահանջուած տեղերը, հետևեալ պատմութեան մեջ.

Մ Ո Յ Ա Ր Թ

Շատ տարիներ . . . Սալցպուրկ (Աւստրիա) քաղաքին . . . երկու փոքրիկներ, քոյր . . . եղբայր, կը բնակէին տնակի մը . . . որ սիրուն գետի մը . . . շինուած էր : Երկուքն ալ կը սիրէին երաժշտութիւնը : Ֆրէտէրիքա երբ տակաւին վեց տարեկան էր, լաւ դաշնամուր կը զարնէր . . . անոր փոքր եղբայրը այնպիսի անուշ եղանակներ կը զարնէր այդ խոնարհ տնակին . . . որ առաջ երբէք լսուած չէին այդչափ պզտիկ տղէ մը : Անոնց հայրը երաժշտութեան դասատու էր . . . իր զաւակները իր ամենէն աղէկ աչակերտներն էին : Այնպիսի նեղութեան օրեր եկան . . . այս տղաքը հազիւ բաւական բան կ'ունենային ուտելու : . . . իրար կը սիրէին . . . երջանիկ էին այն պարզ վայելքով, որ իրենց բաժին ինկած էր :

Գեղեցիկ օր մը ըսին իրարու . «Երթանք պտոյտ մը ընենք անտառին . . . : Թռչունները ի՛նչ անուշ կ'երգեն . . . գետին կարկաչը երաժշտութեան կը նմանի :»

Գացին : Երբ ծառի մը շուքին . . . նստած էին, տղան մտմտաց . . . ըսաւ . «Քոյր, աղօթելու ի՛նչ գեղեցիկ տեղ է այս :» Ֆրէտէրիքա հարցուց զարմանքով . «Ի՛նչ բանի . . . պիտի աղօթենք :» «Հայրիկին ու մայրիկին . . . » ըսաւ եղբայրը, «կը տեսնես . . . ի՛նչպէս տրտում են անոնք : Խեղճ մայրիկը գրեթէ չի խնդար հիմա . . . մեզի . . . միշտ հաց չեն կրնար ճարել : Աղօթենք Աստուծոյ . . . օգնէ մեզի :» «Այո, աղօթենք,» ըսաւ Ֆրէտէրիքա :

Այսպէս այս երկու անուշիկ աղաքը ծնկանս վրայ
կան . . . աղօթեցին : Խնդրեցին երկնուօր Հայրին . . .
որմէ իրենց ծնողները . . . կարողանէ՛ր դիրենք՝ ողնելու
. . . անոնց :

«Բայց ի՞նչպէս կրնանք ողնել Հայրիկին . . . մայր-
իկին ,» հարցուց Տրէտէրիքա : «Չե՛ս դիտեր ,» ըստ-
տրան , Սոցարթ , «իմ հոգիս երած շատ թիւնով լեցուն
է . . . թէ՛ ասե՛նէն նուազարանս պիտի զարնեմ մեծ
մարդոց . . . : . . . անոնք ինձի շատ ստակ պիտի տան :
Ես . . . զանոնք մեր ծնողներուն պիտի տամ . . . մենք
աղաք տան մը . . . պիտի բնակինք . . . երջանիկ պիտի
լլանք :»

Ասոր . . . աղան բարձրաձայն ծիծաղ մը լսելով ապ-
շեցաւ մնաց : Չէր դիտեր . . . իրենց . . . մարդ մը կը
զանուէր : Իտանալով իր . . . տեսաւ չքեղ պարան մը, որ
անտասէն նոր հասած էր հոն : Ստարականը հարցումներ
լրաւ , որոնց պատասխանեց փոքրիկ աղջիկը , լսելով
. . . Սոցարթ կը յուսայ մեծ երած իշա մը ըլլալ : Կը կարծէ
. . . կրնայ ստակ շահիլ . . . մենք . . . աղքատ պիտի
լլանք :

«Կրնայ ընել այդ բանը , երբ սորթի բաւական ա-
ղիկ նուազարան զարնել ,» ըստ ստարականը :

Տրէտէրիքա պատասխանեց . «Ինք վեց տարեկան է
միայն . . . լաւ նուազարան կը զարնէ . . . կրնայ եղա-
նակներ շինել :» «Այդ չի կրնար ըլլալ ,» պատասխանեց
ստարականը : «Եկուք տուն . . . ես պիտի զարնեմ ,» ըստ
Սոցարթի : «Այս իրիկուն կու գամ ,» ըստ ստարականը :

Տղաքը տուն գացին . . . իրենց ծնողաց պատև-
ցին ինչ որ պատահած էր, որոնք կը թուի . . . շատ հա-
նայք զգացին . . . զարմացան :

Շատ չանցաւ, դուռը ամուր մը զարնուեցաւ . . .
երբ տնեցիները բացին, զարմանքով տեսան . . . մար-
դիկ սակառներով աղուոր եփած տեսակ տեսակ առատ
ուտելիքներ կը բերէին: Ընտանիքը ճոխ սեղան մը վա-
յելեցին այդ իրիկուն:

Քիչ մը վերջը, երբ Մոցարթ առանձներդ մը կը զար-
նէր, զոր ինք յօրինած էր, օտարականը ներս մտաւ . . .
ապշած կեցաւ այն զարմանալի քաղցր եղանակը լսելով:
Հայրը ճանչցաւ հիւրը, որ էր Ֆրանչիսկոս Ա., Գերմա-
նիոյ կայսրը:

Շատ ժամանակ չի տեւեց, կայսրը վիէննա հրա-
ւիրեց ընտանիքը, ուր Մոցարթ սքանչապուց արքունիքը
իր զարմանալի կարողութիւններով:

Մոցարթ տասներհինգ տարեկան եղած ժամանակը
վարպետ կը ճանչցուէր բոլոր երեւելի երգահաններուն
մէջ:



ԳԱՍ ԼԸ

Ն Ա Մ Ա Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Նամակի մը գլխաւոր մասերն են .

1. Նամակագրոյ խոյն , որ կը պարունակէ տեղին անունը , ուր կը գրուի նամակը , և թուականը : Զոր օրինակ .

Նիկոմիդիա , 2/14 Յունվար , 1898

2. Հասցեն , որ , թուականէն վերջ , նամակին ճակատը և պահարանին վրայ կը գրուի : Զոր օրինակ .

Աղամ էՖ. Աղամեան
Խարբերդ

3. Ուղերձը կամ ներածականը , որ յարգանքի ձևական կամ քաղաքավարական բառեր են ուղղուած այն անձին , որուն նամակը պիտի դրկուի : Զոր օրինակ .

Տէր , Սիրելի Տէր , Ազնիւ Բարեկամ , եւ այլն :

4. Նամակին մարմինը կամ բուն նամակը , որ կը պարունակէ գրողին բոլոր ըսելիք բաները :

5. Ստորագրուիչներ, որ անունը և, անկէ առաջ, յարգանքի սովորական բառերը կը պարունակէ : Զոր օրինակ .

Զերդ յարգանօք, Զերդ անկեղծութեամբ, եւ այլն :
Գաբրիէլ Երէցեան

Օրինակներ

(1. Նամակագրուի)

Կ. Պոլիս, 4/16 Փետրուար, 1898

(2. Հասցե)

Պ. ԻՍԱՀԱԿ ՅԱԿՈԲԵԱՆ

Այնթապ

(3. Ներածական)

Սիրելի Տէր,

(4. Մարմին)

Զեր նամակին պատասխանելու կը փութամ, քանզի, եւ այլն :

(5. Ստորագրուիչներ)

Զերդ յարգանօք
ԱՆԴՐԱՆԻԿ ԱՌԱՔԵԼԵԱՆ

Աւարկիր, 8/18 Մարտ, 1898

ՊԵՏ. ՄԿՐՏԻՉ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Մարզաւան

Արժ. Տէր,

.....

Մնամ

Խորին սիրով Ձերդ
ԽՈՐԷՆ ՊՕՂՈՍԵԱՆ

Աւարազար, 8/20 Ապրիլ, 1898

ՍԱՆՍՈՍՐԵԱՆ ԳՈՐԺԱՐԱՆԻ ՏՆՕՐԷՆՈՒԹՅԱՆ

Կարին

Տէր,

.....

Յոյժ մեծարանօք
ԵԴՈՒՍՐԴ ԱՐԱՊԵԱՆ

Պրուսա , 10/22 Մայիս, 1898

ՏԻԿ. ՄԱՐԻԱՄ ՆԵՐՍԷՍԵԱՆ

Բերա, Կ. Պոլիս

Սիրելի Տիկին ,

.
.

Անկեղծաբար Ձերդ
Գրիգոր ՍԵՒԵԱՆ

Կեյվե , 12/24 Յուլիս , 1898

ԲԱՐՁՐ. ՎԱՐԺԱՐԱՆԻ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

Պարսիզակ

Պատ. Նախագահ ,

.
.

Տէր , պատիւ ունիմ ըլլալ
Ձեր հնազանդ ծառան
ԽԱԶԻԿ ՄԱԿԱՐԵԱՆ

Եկեմիճե, 14/26 Յուլիս, 1898

ԳԵՐ. Տ. ԶԱՔԱՐԻԱ Ս. ԵՊԻՍԿ. ՏԻՐԱՆԵԱՆ

Հայրախնամ Առաջնորդ
Պրուսայի

Գեր. Ս. Հայր,

.
.

Կը մնամ
Ձեր Սրբազնութեան
ամենախոնարհ ծառայ
ԱՐՄԵՆԱԿ ՎԱՐԴԱՆԵԱՆ

Կեսարիա, 16/28 Օգոստոս, 1898

Սիրելի Քոյրս Աննա,

.
.

Խանդակաթ Կղբայրդ
ԿԱՐԱՊԵՏ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ



Հրահանգ 36

Քրե հրահանգիր մը և անոր պատասխանը:

Օրինակ

Տէր եւ Տիկին Վարդապետեան պատիւ ունին հրահանգիր եւ Տէր եւ Տիկին Վարժապետեանը դաշտային հացկերոյթի մը, յառաջիկայ Շաբաթ, ժամը Յին:

Աս

Հինգշաբթի, 17/29 Սեպտ., 1898

Պատասխան

Տէր եւ Տիկին Վարժապետեան պատիւ կը համարին ընդունիլ Տէր եւ Տիկին Վարդապետեանի դաշտային հացկերոյթի հրահանգը, յառաջիկայ Շաբաթ, ժամը Յին:

Աս

Ուրբաթ, 18/30 Սեպտ., 1898

Հրահանգ 37

Ա. Գրե՛ նամակ մը ուսուցիչիդ, պատմելով թե ինչպէս անցուցիր արձակուրդը:

Բ. Գրե՛ նամակ մը մէկ դասընկերիդ, և յիշե՛ թե ինչ են դպրոցականի մը պարտականութիւնները:

Գ. Գրե՛ նամակ մը հօրդ, և նկարագրե՛ քննութիւններդ և ամալերջի հանդէսը, դասերուդ և վարքիդ թիւերը յիշելով:

Դ. Գրե՛ նամակ մը մէկ բարեկամիդ՝ այցելութիւն մը նկարագրելով, գոր մօտերս ըրած ես ու ե տեղ:

Ե. Գրե՛ նամակ մը, որո՛ւ որ կ'ուզես, գրքի մը վրայով, գոր վերջերս կարդացիր: Ըսե՛ անունը, նիւթը, ոճը, քու տեսութիւնդ անոր վրայ, և ուրիշ ինչ որ կրնաս ըսել անոր վրայ:

Զ. Գրե՛ նամակ մը ու ե տ մտերիմի մը՝ նկարագրելով երեկոյթ մը, ներկայից թիւը, գրօսանքները, նուագները, կերուխումը, և այլն:



Դ. Ա. Ա. Լ. Թ.

Ք Ն Ն Ո Ի Թ Ի Ի Ն

1. Ի՞նչ է նախադասութիւն :
2. Խորհէ՛ ծովուն վրայ և շինէ՛ նախադասութիւն մը :
3. Ի՞նչ է բառ :
4. Ի՞նչ է խօսք :
5. Քերականութիւնը ի՞նչ ուսում կ'աւանդէ :
6. Ըսէ՛ ձայնաւոր գրերուն անունները :

7. Ի՞նչ է իր :
8. Ի՞նչ է ենթակայ : Ի՞նչ է ստորագելի :
9. Քանի՞ տեսակ ենթակայ և ստորագելի կայ :
10. Ի՞նչ է մասունք բանի :
11. Ի՞նչ է վերլուծութիւն :
12. Լեզուին բոլոր բառերը քանի՞ դասակարգի կը բաժնուին :
13. Ի՞նչ կը ցուցնէ անունը , և ո՞րն է բայը :
14. Որո՞նք են նախադասութեան լրացուցիչները :
15. Որո՞նք են ամենէն էական բառերը նախադասութեան համար :
16. Ի՞նչ է դերանուն :
17. Ի՞նչ է բառազննութիւն :
18. Ո՞րն է ածական : Ո՞րն է մակբայ :
19. Ո՞րն է նախադասութեան մը կմախքը :
20. Որո՞նք են յօդուածոյ լրացուցիչները :
21. Ածականը կրնա՞յ մակբայ ըլլալ : Ի՞նչպէս :
22. Ածականը անունէն առաջ կը դրուի թէ ետքը :
23. Անունը նախադասութեան ո՞ր մասը կը կազմէ :
24. Ածականը ո՞ր բառերու լրացուցիչ կ'ըլլայ :
25. Մակբայը որո՞նց լրացուցիչ կ'ըլլայ :
26. Ի՞նչ է յետադրութիւն :
27. Յետադրութիւն բառին նշանակութիւնը ի՞նչ է : Ինչո՞ւ : Սկիզբն ալ կը դրուի՞ : Ի՞նչ կը կոչուի :

28. Ի՞նչպէս կ'ընդլայնես պարզ նախադասութիւն մը :

29. Երբ երկու կամ ավելի նախադասութիւններ իրարու կապուած մեծ նախադասութիւն մը կը կազմեն , ի՞նչ կ'ըսուին :

30. Սոյն նախադասութիւնները միացնող կապը ի՞նչ կը կոչուի :

31. Շաղկապը միայն նախադասութիւններ կը միացնէ : Իսկապէս բառեր կը միացնէ : Օրինակ տուր :

32. Յիշէ քանի մը շաղկապներ :

33. Իւրաքանչիւր պարզ նախադասութիւն քանի՞ խորհուրդ կը պարունակէ :

34. Ի՞նչ է միջարկութիւն :

35. Միջարկութիւնը մասն բանի կամ խօսքին կտորը կրնայ կոչուիլ իրապէս : Ինչո՞ւ :

36. Ի՞նչ կերպով կը բաժնես զայն :

37. Միջարկութեան վրայ դրուած նշանը ի՞նչ կը կոչուի :

38. Որո՞նք են միջակէտը և ստորակէտը : Ո՞ւր կը գործածուին :

39. Ե՞րբ գործածելու ես գլխադիր :

40. Ըսէ ու՞թը տեսակ բառեր :

41. Անոնց իւրաքանչիւրը գործածէ նախադասութեան մը մէջ :

42. Քանի՞ մասերէ կը բաղկանայ նամակ մը , և որո՞նք են :



ՅԱԻԵԼՈՒԱԾ

ՆՈՒԱՐԴ

Գարուն զուարթ ,
Իմ Նուարդ
Քեզ կը սպասէ , որ պէս պէս վարդ
Գլխուն զարդ ,
Բերես արդ .
Քեզ կը սպասէ ճագուկ Նուարդ ,
Գարուն զուարթ :

Նուարդին բեր
Նուրբ թուփեր ,
Ան տխուր է , ոչ անտարբեր .
Հով տափեր ,
Զով ափեր ,
Կանաչ , կակաչ մեր անհամբեր
Նուարդին բեր :

Քեզի հետ
Ետ բեր , ետ
Ինչ որ ըրաւ ձմեռն անհետ .
Այսու հետ
Թող գահէդ
Բղխին անոնք իբրեւ յորդ գետ ,
Ետ գան , ետ :

Թող իմ Նուարդ
Գիտնայ արդ ,
Թէ չեն մեռած ծաղիկն ու վարդ ,
Դաշտն ու արտ
Գեղազուարթ .
Այլ կը ննջեն ձմեռն անզարդ
Մինչ աւարտ :

Երբ գարուն
Գայ սիրուն ,
Կ'ելլեն անոնք ճիշդ ձագերուն
Պէս թրթռուն ,
Իրենց սարսուռն
Ցուրտ սլատանքէն , երբոր գարուն
Գայ սիրուն :

Կուգայ օր ,
Օրհնեա՛լ օր ,
Երբ մեռելոց հետ հին ու նոր
Նուարդին հօր
Շիրմէն խոր
Գայ մերն ալ ու փարինք անոր ,
Ա՛հ , այն օր :

ԱՍՏՈՒԾՈՅ ԱԶՔԵՐԸ

Ո՛վ պայծառ աստղեր, գեղեցիկ աստղեր,
Գուք Աստուած Հայրին աչքե՞րն էք եղեր .
Ու վերէն ինձի կը նայիք շիտակ,
Իբրեւ երկինքի պահապան . . . (1) :

Ուստի հսկեցէք զիս, ո՛հ, կ'աղաչեմ,
Երբ սենեակիս մէջ լռիկ կը . . .
Այդ աղուոր աչքեր վրաս թող փայլին,
Մինչ առտուն ելլեմ երգով . . . :

ԲԱՐԵՒԱԳԻՐ ՄԸ

Բարե՛ւ, Գառնիկ, քեզ շատ բարեւ,
Միշտ վայելես օր ու . . .
Ճակտիդ պսակ դարնի տերեւ,
Վարդի թփեր գլխուդ . . . :

(1) Աշակերտը կէտերուն տեղ նախորդ տողին համայանգ բառերը
դնէ .

Ա Ր Ձ Ա Կ Ո Ի Ր Դ

Եկէք, տղաք, երթանք լեռ, ձոր,
Վազենք, ցատկենք, խաղանք գնտակ,
Եւ շատ ու շատ ընենք կատակ,
Արձակուրդի ցնծալից օր :

Կը պսպղան հովիտ, ծործոր,
Ա՛խ, սա Յուլիան ի՛նչ աղուոր է,
Որ, մանաւանդ, մեզ կը բերէ
Արձակուրդի ցնծալից օր :

Ծառերն ելլենք ու տանձ, խնձոր
Քաղենք առատ եւ անխնայ,
Քանզի շուտով կը վերջանայ
Արձակուրդի ցնծալից օր :

Եկէք, տղաք, ելլենք լեռ, ձոր,
Խաղանք, խնդանք, ու դպրոցէ
Ազատ՝ գոչենք կեցցէ՛, կեցցէ՛
Արձակուրդի ցնծալից օր :

Թ Ռ Չ Ն Ի Կ Ի Ն

Երգէ, թռչնիկ,
Քու բոյնիդ մէջէն,
Ուր որ ձագուկներդ
Հեզիկ կը . . . (1) :

Երգէ անոնց
Երգեր անհամար,
Երգ մըն ալ, թռչնիկ,
Երգէ ինձ . . . :

Մ Է Կ Գ Ո Ր Ծ Մ Ի Ե Ի Ն Ո Յ Ն Ա Տ Ե Ն

Գործի ատեն գործ,
Խաղի ատեն . . .
Այդ է ճիշդ ճամբան,
Ապրելու . . . :

Մէկ միտք կարող է
Մէկ գործ լաւ ընել,
Գործի մէջ գործ, խաղ.
Ճամբադ է . . . :

Վ Ե Ր Ջ



Ա Ռ Ա Ջ Ի Ն] Շ Ր Ջ Ա Ն Ի Ն


(1) Աշակերտը կէտերուն տեղ երկրորդ տողին համայանգ բառերը
դնէ :


ԳԱՍ

- Ա Ներածական — Նախադասութիւն
- Բ Բառ
- Գ Խօսք
- Դ Քերականութիւն
- Ե Գիր
- Զ Իր
- Է Իր ցուցնող բառեր
- Ը Նախադասութեան մասերը — Ենթակայ եւ ստորոգելի
- Թ Վերլուծութիւն
- Ժ Բառերու դասաւորութիւնը կամ տեսակները — Անուն եւ բայ
- ԺԱ Ենթական եւ իր լրացուցիչները
- ԺԲ Ստորոգելին եւ իր լրացուցիչները
- ԺԳ Նախադասութեան երկու էական բառերը — Անուն եւ բայ
- ԺԴ Հանդէս
- ԺԵ Վարժութիւն շարադրութեան
- ԺԶ Դերանուն
- ԺԷ Ենթակայ, ստորոգելի եւ լրացուցիչները
- ԺԸ Բառազննութիւն
- ԺԹ Վարժութիւն շարադրութեան
- Ի Պարզ եւ բաղադրեալ ենթակայ եւ ստորոգելի

- ԻԱ.** Յասկութիւն ցուցնող բառեր
ԻԲ. Ենթակայի եւ ստորոգելիի լրացուցիչ — Ածական
ԻԳ. Վարժութիւն շարադրութեան
ԻԴ. Հանդէս
ԻԵ. Ստորոգելիի լրացուցիչ — Մակբայ
ԻԶ. Շարադրութիւն
ԻԷ. Յօդուածոյ լրացուցիչներ
ԻԸ. Ուրիշ լրացուցիչներ — Յետադրութիւն
ԻԹ. Վարժութիւն շարադրութեան
Լ. Բառերու եւ նախադասութեանց կապակցութիւն — Շաղկապ
ՎԱ. Վարժութիւն շարադրութեան
ԼԲ. Միջարկութիւն
ԼԳ. Հանդէս
ԼԴ. Համառօսութիւն ուրբ մասունք բանիներու
ԼԵ. Հանդէս հրահանգներու
ԼԶ. Հանդէս շարադրութեանց
ԼԷ. Վերաբաղ
ԼԸ. Նամակագրական
ՎԹ. Քննութիւն
 Յաւելուած — Ոճանաւորներ







İBB Eyüp Sultan Halk ve Çocuk Kütüphanesi



ERM1014

255.07.02.01.06.00/

ԳՐԱՏՈՒՆ Պ. Պ. ՊԱԼԵՆՑ

ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ

ՏԱՐՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ

ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ԴԱՍԱԳԻՐՔԵՐՈՒ

Թիւ 20, Չափանախարհային Եօզուշու, Կ. Պոլիս

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՇՐՋԱՆ ԱՌԱՋԻՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Դահեկան

Մասունք Բանի Կամ Բառեր 2

ՇՐՋԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Ասորաբաժանում Բառերու 2½

ՇՐՋԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Չեսափոխութիւն Բառերու 4

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Պ. Պ. ՊԱԼԵՆՑ

معارف عمومیہ نظارت جلیہ سنک ۸ شوال ۳۱۵ و ۲۰ شباط ۳۱۳
تاریخی و ۲۹۷ نومرولی رخصتنامه سیه طبع اولتمشدر